

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ՀՀ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

2011 թվականի առաջին եռամսյակի փաստացի տվյալների ամփոփումը ցույց տվեց, որ տնտեսության վերականգնումը տարվա առաջին եռամսյակին շարունակվում է՝ հանգեցնելով մակրոտնտեսական իրավիճակի զգալի բարելավման և նախանշելով առավել լավատեսական սպասումներ քան մինչ այդ էր՝ ինչի վկայությունն է գրանցված տնտեսական ակտիվության ցուցանիշը: Տնտեսական ակտիվությունը 2011 թվականի հունվար-մարտին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 2.2%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է թե՛ համաշխարհային տնտեսության վերականգնմամբ, և թե՛ ՀՀ կառավարության նախորդ տարվա ընթացքում իրականացրած հետձգնաժամային ակտիվ գործողություններով:

Տեղի է ունեցել արտաքին առևտրաշրջանառության աճ, հատկապես գրանցելով բարձր արտահանման աճ՝ 25.2%: 2011 թվականի մարտին միջին գնաճը գրանցվել է համեմատաբար բարձր՝ 11.1%, որը հիմնականում պայմանավորված էր միջազգային շուկաներում պարենային և ոչ պարենային ապրանքների գների աճով և տարեվերջից փոխանցվող առաջարկի շուկերով պայմանավորված գյուղատնտեսական ապրանքների բարձր գներով: Արձանագրվել է նաև պետական բյուջեի եկամուտների անվանական շուրջ 9.5% աճ, ընդ որում՝ աճել է գրեթե բոլոր հարկատեսակների գծով, իսկ ծախսերի գծով անվանական աճը կազմել է ընդամենը 0.2%: Այսպիսով առաջին եռամսյակի արդյունքներով հարկաբյուջետային քաղաքականությունը ամբողջական պահանջարկի վրա թողել է զսպող ազդեցություն՝ ինչը դրական կանրադառնա հետագա գնաճային զարգացումների վրա մեղմելով գնաճային սպասումները:

Համախառն պահանջարկ¹: 2011 թվականի հունվար-մարտին վերջնական սպառումն իրական արտահայտությամբ նվազել է 0.4%-ով: Վերջնական սպառման կառուցվածքում պետական և մասնավոր սպառման տեսակարար կշիռները 2011 թվականի հունվար-մարտին կազմել են համապատասխանաբար 11.4 և 88.6%, ընդ որում իրական արտահայտությամբ պետական սպառումը նախորդ տարվա համեմատ նվազել է 15.6%-ով, իսկ մասնավոր սպառման մասով արձանագրվել է 2% աճ:

Կապիտալ ներդրումները իրական արտահայտությամբ կրճատվել են 4.3%-ով՝ հիմնականում պետական ներդրումների կրճատման հաշվին: Սակայն, ի տարբերություն պետական ներդրումների

¹ Այս հատվածում բերված ցուցանիշները ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներն են:

մասնավոր ներդրումները ցուցաբերել են աճի միտումներ՝ արձագանքելով տնտեսությունում նկատվող վերականգնման զարգացումներին:

2011 թվականի հունվար-մարտին ապրանքների և ծառայությունների զուտ արտահանումը դրամային արտահայտությամբ նվազել է 11.7%-ով, ընդ որում արտահանման իրական ծավալները դրամային արտահայտությամբ աճել է շուրջ 4%-ով՝ պայմանավորված համաշխարհային տնտեսությունում պահանջարկի աստիճանական վերականգնմամբ, արտահանավող ապրանքների մրցունակության բարձրացմամբ, ինչպես նաև կառավարության հակաճգնաժամային գործողությունների շրջանակներում արտահանողներին ցուցաբերված օժանդակությամբ: Մյուս կողմից, ապրանքների և ծառայությունների ներմուծումը իրական արտահայտությամբ նվազել է 6.4%-ով:

Համախառն առաջարկ: 2011 թվականի առաջին եռամսյակում տնտեսական ակտիվության ցուցանիշն ըստ ամիսների կազմել է համապատասխանաբար՝ 106.1, 100.9 և 100.3%:

Աղյուսակ 1. 2004-2011 թվականների առաջին եռամսյակի տնտեսության ճյուղերի իրական ծավալի ինդեքսները նախորդ տարվա նկատմամբ

	<i>2004</i>	<i>2005</i>	<i>2006</i>	<i>2007</i>	<i>2008</i>	<i>2009</i>	<i>2010</i>	<i>2011</i>
<i>Համախառն ներքին արդյունք</i>	110.5	113.9	113.2	113.7	106.9	85.9	102.1	
<i>Գյուղատնտեսություն</i>	106.3	101.5	102.4	102.6	99.8	99.1	95.4	98.6
<i>Արդյունաբերություն</i>	103.0	105.7	100.1	104.1	103.3	91.2	105.4	104.8
<i>Շինարարություն</i>	122.5	110.6	125.9	118.0	117.8	81.2	108.3	92.0
<i>Ծառայություններ</i>	114.2	108.7	126.5	113.8	114.3	100.1	105.7	106.2
<i>Զուտ անուղղակի հարկեր</i>	98.7	120.4	109.6	127.3	131.6	84.0	108.0	-


Արդյունաբերություն: 2011 թվականի հունվար-մարտ ամիսներին արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի ծավալի ինդեքսի 4.8% աճ: Ճյուղի աճին հիմնականում նպաստել է մշակող արդյունաբերությունը (ընթացիկ գներով աճել է 12.8%-ով) և էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարումը (ընթացիկ գներով աճել է 39.7%-ով), որոնց կշիռները ընդհանուր արդյունաբերության մեջ կազմել են համապատասխանաբար՝ 57.1% և 22.2%: Մշակող արդյունաբերության աճը պայմանավորված է եղել հիմնային մետաղների և սննդամթերքի արտադրության ենթաճյուղերի աճով՝ պայմանավորված արտահանման ծավալների ավելացմամբ և ճյուղի մրցունակության բարելավմամբ:

Գյուղատնտեսություն: 2011 թվականի հունվար-մարտին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ արձանագրվել է գյուղատնտեսության արտադրանքի ծավալի ինդեքսի 1.4% նվազում: Ընդ որում, գյուղատնտեսության անկումը պայմանավորվել է անասնաբուծությամբ (կշիռը գյուղատնտեսության ճյուղի մեջ կազմել է 96.5%)՝ մասնավորապես ձվի արտադրության ծավալների շուրջ 20%-ով կրճատմամբ:

Շինարարություն: Ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացված շինարարության ծավալները 2011 թվականի հունվար-մարտին կազմել են 44.6 մլրդ դրամ և նախորդ տարվա համեմատ նվազել է 8%-ով: Հաշվետու ժամանակաշրջանում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ բնակչության և կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող շինարարության ծավալները աճել են: Մասնավորապես՝ իրականացված շինարարության (ըստ ֆինանսավորման աղբյուրների և հաշվարկված ընթացիկ գներով) կառուցվածքում բնակչության միջոցները կազմել են 15.2%՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճելով 26.3%-ով: Իսկ կազմակերպությունների միջոցները կազմել են 51.0% և դրանց հաշվին իրականացված շինարարության ծավալները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել են 46.2%-ով: Փոխարենը էապես նվազել են միջազգային վարկերը 84% (կշիռը ընդհանուր շինարարության ծավալի մեջ կազմել է 6.6%):

Ըստ տնտեսության ճյուղերի շինարարությունը հիմնականում ուղղված է եղել գյուղատնտեսությանը և անշարժ գույքի հետ կապված գործառնություններին, որոնց բաժինը շինարարության ծավալներում կազմել է համապատասխանաբար 15.1 և 32.9%: Շինարարության մեջ աճել են նաև տրանսպորտի և կապի, մշակող արդյունաբերության տեսակարար կշիռները՝ համապատասխանաբար 14.5 և 10.7% (տե՛ս Գծապատկեր 1), որը հետագայում կարող է հիմք հանդիսանալ նաև նշված ճյուղերի զարգացմանը:

Գծապատկեր 1. Շինարարության կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի 2010 և 2011 թվականների հունվար-մարտ ամիսներին (տոկոս)



Ծառայություններ և առևտուր: 2011 թվականի հունվար-մարտին մատուցված ծառայությունների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ընթացիկ գներով աճել է 6.2%-ով: Ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմել ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտը (26.7%), որը անվանական արտահայտությամբ աճել է 21.3%-ով:

2011 թվականի հունվար-մարտին առևտրի շրջանառությունն ընթացիկ գներով կազմել է 143.4 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, համադրելի գներով, աճել է 2.7%-ով:

Տրանսպորտ և կապ: 2011 թվականի հունվար-մարտին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխակառուցումների ծավալը 2010 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 0.1%-ով: Սակայն, ըստ մայրուղային խողովակաշարային (կշիռը ընդհանուրի մեջ կազմել է 24.8%) և երկաթուղային տրանսպորտի (կշիռը ընդհանուրի մեջ կազմել է 33.6%) տեսակների աճել է համապատասխանաբար 25.6 և 15.8%-ով: 2011 թվականի հունվար-մարտին բեռնափոխակառուցումների ծավալն ըստ ավտոմոբիլային տրանսպորտի 2010 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 18.6%-ով, որի նվազման հիմնական պատճառը եղել է ներհանրապետական ավտոմոբիլային բեռնափոխակառուցումների ծավալների

նվազումը՝ 25.4% (տեսակարար կշիռը ընդհանուր ավտոմաքիլային բեռնափոխադրումների մեջ կազմում է 68.4%):

2011 թվականի հունվար-մարտին կապի ծառայություններից ստացված հասույթը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 3.2%-ով:

Գներ և սակագներ: 2011 թվականի մարտին նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ արձանագրվել է 5.2% գնաճ, որը հիմնականում պայմանավորված է եղել պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների 7.9% (նպաստումը գնաճին՝ 4.2 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների գների 0.9% (նպաստումը գնաճին՝ 0.1 տոկոսային կետ) և ծառայությունների սակագների 2.5% (նպաստումը գնաճին՝ 0.8 տոկոսային կետ) աճով:

2011 թվականի մարտին միջին գնաճը կազմել է 11.1%, որը հիմնականում պայմանավորված էր պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների 15.2% աճով, ոչ պարենային ապրանքների գների 3.5% և ծառայությունների սակագների 7.6% աճով:

Ընդհանուր առմամբ եռամսյակի ընթացքում գնաճի վարքագիծը պայմանավորող հիմնական գործոններ են հանդիսացել տարեվերջից փոխանցվող առաջարկի շուկերով պայմանավորված գյուղատնտեսական ապրանքների գների աննախադեպ բարձր աճը և միջազգային շուկաներում պարենային և ոչ պարենային ապրանքների գների աճը:


Աշխատանքի շուկա: 2011 թվականի 1-ին եռամսյակում գործազրկության պաշտոնական մակարդակը հանրապետությունում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 0.7 տոկոսային կետով և կազմել 6.6% (77.6 հազ. մարդ):

2011 թվականի հունվար-մարտին միջին ամսական անվանական աշխատավարձը 2010 թվականի նույն ժամանակահատվածում գրանցված ցուցանիշի նկատմամբ աճել է 5.5%-ով: Միջին ամսական անվանական աշխատավարձի ցուցանիշները պետական և ոչ պետական հատվածներում աճել են 4.3% և 2.7%-ով՝ կազմելով համապատասխանաբար 87311 և 133985 դրամ: Սակայն, պետք է արձանագրել, որ պայմանավորված ընթացիկ տարվա առաջին եռամսյակում արձանագրված գնաճով, 2011 թվականի հունվար-մարտին իրական աշխատավարձը 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 5.4%-ով:

Արտաքին հատված: Շարունակում են արտահայտվել հակաճգնաժամային միջոցառումների շրջանակներում արտահանման խթանման ուղղությամբ ՀՀ կառավարության քաղաքականության դրական արդյունքները՝ 2011 թվականի առաջին եռամսյակի տնտեսության արտաքին հատվածի բարելավումը ձևավորվում է շատ արագ: Արտաքին պահանջարկի աճի հետ մեկտեղ տարեսկզբից ավելացել են նաև Հայաստան ներհոսող տրանսֆերտները և գործոնային եկամուտները՝ նպաստելով ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատմանը:

Արտաքին առևտուր: 2011 թվականի առաջին երեք ամիսներին ապրանքների գծով արտաքին առևտրի բացասական մնացորդը (տե՛ս Գծապատկեր 2) կազմել է 621.4 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով մոտ 2.6 մլն ԱՄՆ դոլարով կամ 0.4%-ով²:

Գծապատկեր 2. Առևտրի հաշվեկշռի դինամիկան հունվար-մարտ ամիսներին (մլն ԱՄՆ դոլար)



Արտաքին ապրանքաշրջանառությունը³ 2011 թվականի առաջին երեք ամիսների արդյունքներով կազմել է 1118.4 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 10.1%-ով: Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել դոլարային արտահայտությամբ արտահանման և ներմուծման ծավալների աճ. արտահանումն աճել է 25.2%-ով՝ կազմելով 248.5 մլն դոլար, իսկ ներմուծումը՝ 6.4%-ով և կազմել է 869.9 մլն դոլար:

Ներմուծում: Ներմուծման աճը հիմնականում պայմանավորված էր ընթացիկ տարում ինչպես, բնակչության տնօրինվող եկամուտների, այնպես էլ տնտեսության վերականգմամբ: Ներմուծման աճ է արձանագրվել կառուցվածքում մեծ կշիռ ունեցող գրեթե բոլոր ապրանքների գծով, բացառությամբ պատրաստի սննդի արտադրանքի և ներդրումային բնույթի ապրանքների գծով. ամբողջ ներմուծման մեջ «Մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ», «Սարքեր և ապարատներ» և «Տարբեր արդյունաբերական ապրանքներ» ապրանքախմբերի ընդհանուր տեսակարար կշիռը կազմել է 15.9% (2010թ-ին՝ 21.3%), որոնց նվազումը 4.4 տոկոսային կետով նպաստել է ներմուծման անկմանը: Իսկ «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի 13%-ով նվազումը ներմուծման անկմանը նպաստել է ևս մեկ տոկոսային կետի չափով: Ներմուծման 6.4% աճի ամենաբարձր՝ 2.7

² Արտաքին առևտրի հաշվեկշիռը՝ արտահանումը և ներմուծումը հաշվարկված ՖՕԲ գներով, 2011 թվականի առաջին եռամսյակին կազմել է 487.4 մլն դոլար:

³ Արտահանումը ՖՕԲ, ներմուծումը՝ ՍԻՖ գներով:

տոկոսային կետը պայմանավորվել է «Բուսական ծագման արտադրանք», 2.4 տոկոսային կետը՝ «Հանքահումքային արտադրանք», 1.7 տոկոսային կետը՝ «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և 1.5 տոկոսային կետը՝ «Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք» ապրանքախմբերի ներմուծման աճով, որոնք համապատասխանաբար կազմել են 51.7, 11.8, 22.4 և 24.0%:


Արդահանում: Տնտեսության արտահանման ոլորտում ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումների արդյունքները՝ զուգորդվելով հումքային բնույթի ապրանքատեսակների արտահանման շուկաների վիճակի բարելավման հետ, արդեն իսկ 2009 թվականի երրորդ եռամսյակից արտահայտվեցին արտահանման որոշակի աշխուժացման և ծավալների աստիճանական վերականգնման տեսքով, իսկ 2010 թվականին և 2011 թվականի տարեսկզբեց ամրապնդեցին արտահանման նշված ձեռքբերումները:

2011 թվականի առաջին երեք ամիսների արդյունքներով արտահանման 25.2% աճի ամենաբարձր՝ 11 տոկոսային կետը պայմանավորվել է «Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի արտահանման ավելացմամբ: Արտահանման աճի 8.2 տոկոսային կետը պայմանավորվել է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», 4.1 տոկոսային կետը՝ «Պատրաստի սննդի արտադրանք» և 1.7 տոկոսային կետը՝ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի ծավալներով, որոնք համապատասխանաբար աճել են՝ 22.3, 34.6 և 12.2%-ով:

Նորմալացված առևտրային հաշվեկշիռ⁴: Տնտեսական անվտանգությունը բնութագրող ցուցանիշներից է նորմալացված առևտրային հաշվեկշռի գործակիցը, որը 1997 թվականի երեք ամիսների -0.7-ից աստիճանաբար բարելավվել է՝ 2002-2005 թվականներին տատանվելով -0.3 մակարդակի շուրջ, այնուհետև 2006-2009 թվականներին ցուցաբերել է վատթարացման միտում՝ համապատասխանաբար կազմելով -0.4, -0.5, -0.6 և -0.7 (տե՛ս Գծապատկեր 3): 2006-ից 2008 թվականների ընթացքում նորմալացված հաշվեկշռի նման վարքագիծը պայմանավորված է եղել արտահանման աճի տեմպերի նկատմամբ ներմուծման առաջանցիկ աճի տեմպերով, իսկ վերջինս էլ տնտեսությունում սպառողական և ներդրումային ապրանքների նկատմամբ անընդհատ աճող պահանջարկի, ինչպես նաև 2003 թվականից արժևորվող փոխարժեքի արդյունքն էր: 2009 թվականին նորմալացված հաշվեկշռի գործակիցը կազմել է -0.7՝ հիմնականում պայմանավորված դոլարային արտահայտությամբ արտահանման առաջանցիկ անկմամբ: 2011 թվականի հունվար-մարտ ամիսներին՝ արտահանման դոլարային արտահայտությամբ առաջանցիկ աճով պայմանավորված, այդ ցուցանիշը կազմել է -0.56՝ ցուցաբերելով որոշակի բարելավում 2010 թվականի համեմատ:


⁴ Առևտրային հաշվեկշռի և ապրանքաշրջանառության հարաբերակցություն:

Գծապատկեր 3. Նորմալացված առևտրային հաշվեկշռի գործակիցը (տարվա առաջին եռամսյակներ)



Ներմուծման ծածկման գործակից: 2011 թվականի առաջին եռամսյակի ներմուծման ծածկման գործակիցը նախորդ տարվա համեմատ բարելավվել է 5.3 տոկոսային կետով. ընթացիկ տարվա երեք ամիսների արդյունքներով արտահանման հաշվին ֆինանսավորվել է ներմուծման 33.8% (տե՛ս Գծապատկեր 4):

Գծապատկեր 4. 1996-2011 թվականների ներմուծման ծածկման գործակիցը⁵, տոկոսներով (առաջին եռամսյակներ)




⁵ Ներմուծման ծածկման գործակիցը՝ ընթացիկ տարվա առաջին եռամսյակի ծառայությունների մասին տեղեկատվության բացակայության պատճառով, ներկայացված է ապրանքների արտահանման և ներմուծման հարաբերակցությամբ (ՖՕԲ գներով):

Ներճյուղային առևտուր: 2011 թվականի ՀՀ ներճյուղային⁶ առևտրի մակարդակի վերլուծությունը վկայում է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «Թանկարժեք ու կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի գծով համեմատաբար կայուն երկկողմանի արտաքին առևտրի պահպանման մասին: Ընդ որում, ի տարբերություն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի գնահատականների, «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախումբը հատել է ներճյուղային առևտրի միջակայքի այն սահմանը, որից հետո ապրանքախմբի առևտուրը կարող է համարվել առավելապես երկկողմանի (տե՛ս Գծապատկեր 5):

Գծապատկերում դրական և բացասական նշանները տրամադրում են լրացուցիչ տեղեկատվություն և պայմանավորված են համապատասխան ապրանքախմբերի արտաքին առևտրային հաշվեկշռի դրական կամ բացասական մնացորդով: «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» (լրիվ երկկողմանի առևտուր) ապրանքախմբի դրական առևտրային մնացորդը վկայում է մեր երկրի կողմից այդ ապրանքատեսակի գծով արտաքին աշխարհի պահանջարկը բավարարելու մասին:

Գծապատկեր 5. 2011 թվականի առաջին եռամսյակի ներճյուղային առևտուրը



Մնացած ապրանքախմբերով տեղի է ունեցել մեծ մասամբ միակողմանի առևտուր՝ ներքին պահանջարկը բավարարելու ուղղությամբ (բացասական առևտրային մնացորդ):

Արտաքին առևտուրն ըստ գործընկեր երկրների: 2011 թվականի առաջին եռամսյակի ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 29.0%-ը բաժին է ընկել ԱՊՀ և 33.5%-ը՝ ԵՄ երկրներին, 2010

⁶ Ներճյուղային առևտուրը տեղի է ունենում, երբ երկիրը և ներմուծում, և արտահանում է առանձին ճյուղում արտադրվող ապրանքատեսակները: Ներճյուղային առևտրի գործակիցը իրենից ներկայացնում է արտահանման և ներմուծման բացարձակ արժեքով փոքրի հարաբերակցությունը մեծին: '0' նշանակում է լրիվ միակողմանի, իսկ '1'՝ լրիվ երկկողմանի առևտուր:


թվականին նշված երկրների տեսակարար կշիռները կազմել են 28.4 և 32.3%: ԱՊՀ և ԵՄ երկրների հետ ՀՀ ապրանքաշրջանառության աճը 2011 թվականին նախորդ տարվա համեմատ համապատասխանաբար կազմել է 12.5% և 14.1%: ՀՀ խոշոր առևտրային գործընկեր-երկրների շրջանակում ընդգրկված էին Գերմանիան (առևտրաշրջանառության 8.1%-ը), Չինաստանը (7.3%), Բուլղարիան (5.6%), ԱՄՆ-ն (5.1%), Թուրքիան (4.0), Իրանը (3.8%), ինչպես նաև ԱՊՀ երկրներից՝ Ռուսաստանը (21.8%) և Ուկրաինան (4.5%): Վերջիններիս բաժին է ընկել ՀՀ և ԱՊՀ երկրների միջև տարվա առաջին ամիսների ընթացքում կատարված ապրանքաշրջանառության շուրջ 90%-ը: Հանրապետության թվով 38 հիմնական գործընկեր երկրները մեծամասամբ (մոտ 80%-ը) հանդիսանում են ԱՀԿ անդամ պետություններ:

Փոխարժեք: Նախորդ տարվա ընթացքում ձևավորված ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկման միտումները 2011 թվականի տարեսկզբից շարունակվել են: Մասնավորապես՝ ընթացիկ տարվա հունվար-մարտի միջին փոխարժեքը կազմել է 366.14 դրամ ԱՄՆ դոլարի դիմաց (2010-ին՝ 384.08). նախորդ տարվա միջինի նկատմամբ գրանցվել է ԱՄՆ դոլարի համեմատ դրամի անվանական արժեքի 4.9% արժևորում՝ 2010 թվականի համապատասխան ցուցանիշի 15.2% արժեզրկման դիմաց:

ՀՀ ազգային արժույթը ոչ միայն դոլարի, այլ արտաքին առևտրի տեսանկյունից առավել կարևոր մի քանի արժույթներից բաղկացած «զամբյուղի» նկատմամբ (անվանական արդյունավետ փոխարժեք) ընթացիկ տարվա առաջին երկու ամիսներին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ արժևորվել է 4.8%-ով (տե՛ս Գծապատկեր 6), ինչը նշանակում է, որ ՀՀ դրամը արժևորվել է հիմնական արժույթների միավորված գնի համեմատ, ընդ որում վերոնշյալ «զամբյուղում» ընդգրկված մնացած երկրների արժույթները դոլարի նկատմամբ արժեզրկվել են (շուրջ մեկ տոկոսով): Հիմնականում պայմանավորված անվանական արդյունավետ փոխարժեքի վարքագծով՝ իրական արդյունավետ փոխարժեքի միջին արժևորումը տարվա առաջին երկու ամիսների ընթացքում կազմել է 10.6%⁷, ինչը կարող է իր բացասական ազդեցությունը թողնել երկրի ընթացիկ հաշվի վրա:

⁷ Հաշվարկներում օգտագործվել են ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքի 2011թ. մայիսի 5-ի դրությամբ տվյալները:

Գծապատկեր 6. Իրական արդյունավետ փոխարժեքի ամսական միջին շարժընթացը 2010 թվականին և 2011 թվականի առաջին երկու ամիսներին



Ֆինանսական շուկա: 2011 թվականի մարտ ամսին փողի բազան կազմել է 506.3 մլրդ դրամ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 8.9%-ով: Ընդ որում, զուտ արտաքին ակտիվներն նվազել են 14.5%-ով, իսկ զուտ ներքին ակտիվները աճել են 409.2%-ով:

Նույն ժամանակահատվածում փողի բազայում ԿԲ-ից դուրս կանխիկը աճել է 13%-ով (տեսակարար կշիռը փողի բազայում կազմել է շուրջ 61.7%), իսկ պարտադիր պահուստները դրամով և արտարժույթով նվազել են 3.5%-ով (տեսակարար կշիռը փողի բազայում կազմել է շուրջ 35.2%):

2011 թվականի մարտ ամսին փողի զանգվածը կազմել է 925.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 14%-ով: Ընդ որում, զուտ արտաքին ակտիվներն նվազել են 60.9%-ով, իսկ զուտ ներքին ակտիվները աճել են 66.9%-ով:

Փողի զանգվածում բանկային համակարգից դուրս կանխիկը և դրամային ավանդները ապահովել են փողի զանգվածի աճի համապատասխանաբար 3.8 և 9.4 տոկոսային կետը, իսկ արտարժույթային ավանդները՝ ընդհամենը 0.8 տոկոսային կետ⁸: Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները 2011 թվականի մարտ ամսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 8.8%-ով: Նշենք, որ չնայած դեռևս բարձր է տնտեսության դոլարացման մակարդակը՝ 2011 թվականի մարտ ամսին ներգրավված ավանդների 70.2%-ը կազմել են արտարժույթով ավանդները, սակայն համեմատաբար նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի հետ դոլարացումը նվազել է 6.7 տոկոսային կետով:

⁸ Նշենք, որ փողի ագրեգատներում ոչ ռեզիդենտների ավանդները չեն ընդգրկվում:

Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրված վարկերը 2011 թվականի մարտ ամսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 33.2%-ով⁹ (նշենք որ վարկերի 59.8% կազմում են արտարժույթով վարկերը):

Առևտրային բանկերի դրամով տրամադրված վարկերի տոկոսադրույքները 2011 թվականի մարտին կազմել են 18.29%՝ 2010 թվականի մարտի 19.10%-ի համեմատ: Նույն ժամանակաշրջանում գրանցվել է առևտրային բանկերի մինչև մեկ տարի ժամկետով դրամով ներգրավված ավանդների տոկոսադրույքների աճ: Այսպես, եթե 2010 թվականի մարտին ավանդների տոկոսադրույքը կազմել է 8.54%, ապա 2011 թվականի մարտին այն աճել է 0.51 տոկոսային կետով և կազմել 9.05%:

2011 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական (շուկայական) պարտատոմսերի շուկայում նկատվել է տոկոսադրույքների աճ: Այսպես, եթե 2010 թվականի առաջին եռամսյակի ընթացքում տեղաբաշխված պետական արժեթղթերի միջին եկամտաբերությունը կազմել է 11.67%, ապա 2011 թվականի առաջին եռամսյակում այն կազմել է 12.14%: Եռամսյակի ընթացքում տեղաբաշխված պետական արժեթղթերի ծավալը կազմել է 36.9 մլրդ դրամ, իսկ միջին ժամկետայնությունը՝ 1841 օր: Նշենք, որ տոկոսադրույքների աճին նպաստել է նաև ՀՀ ԿԲ-ի կողմից ռեպո տոկոսադրույքի բարձրացումը, որը 2011 թվականի փետրվար և մարտ ամիսներին բարձրացվել է գնաճային ճնշումները մեղմելու տեսանկյունից և արդյունքում կազմել է 8.25%:

2011 թվականի վերջին պետական (շուկայական) պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը գերազանցել է թողարկման ցուցանիշը 1.98 անգամ, իսկ տեղաբաշխում/թողարկում հարաբերակցության միջին մեծությունը կազմել է 0.99:

Աղյուսակ 2. Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները 2011 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում


Ամիսներ	I	II	III
Առևտրային բանկերի վարկեր*	18.25	18.66	18.29
Առևտրային բանկերի ավանդներ*	8.74	9.23	9.05
ՀՀ ԿԲ ռեպո գործառնություններ	7.25	7.75	8.25

* Հաշվարկված է 16 օրից մինչև մեկ տարի ժամկետով, միայն դրամով տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների համար (առանց միջբանկային շուկայի):

⁹ Ընդգրկված չեն կուտակված տոկոսները: Վարկերի մեջ ներառված են նաև ֆակտորինգային, լիզինգային գործառնությունները և ռեպո համաձայնագրերը:


ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

ՀՀ կառավարության ծրագրով 2011 թվականի առաջին եռամսյակում նախատեսվել էր շուրջ 185.8 մլրդ դրամ բյուջետային եկամուտների ստացում: «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետի և 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներից ելնելով՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական հիմնարկների համար կառավարության որոշումներով բացված արտաբյուջետային հաշիվների համապատասխան շրջանառությունը, ինչպես նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները: Նշված միջոցները ներառյալ, ինչպես նաև հաշվի առնելով կառավարության լիազորությունների շրջանակներում կատարված մյուս փոփոխությունները՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների ծրագիրն ավելացվել է 4.6 մլրդ դրամով (2.5%-ով) և կազմել շուրջ 190.4 մլրդ դրամ, որից 176.5 մլրդ դրամը՝ սեփական եկամուտների, 13.8 մլրդ դրամը՝ պաշտոնական դրամաշնորհների գծով: Հաշվետու եռամսյակում ստացվել են շուրջ 184.9 մլրդ դրամի փաստացի եկամուտներ, որոնք կազմում են կանխատեսված ցուցանիշի 97.1%-ը: Ընդ որում, հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների, ինչպես նաև այլ եկամուտների գծով արձանագրվել է ծրագրի գերազանցում համապատասխանաբար 0.7%-ով և 13.8%-ով: Պաշտոնական դրամաշնորհները նույն ժամանակահատվածում 56.1%-ով զիջել են ծրագրված ցուցանիշը: 2010 թվականի առաջին եռամսյակի համեմատ պետական բյուջեի եկամուտներն աճել են 9.5%-ով կամ 16 մլրդ դրամով: Մասնավորապես՝ հարկային եկամուտների (ներառյալ՝ պետական տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները) և պաշտոնական դրամաշնորհների գծով մուտքերն աճել են համապատասխանաբար 10.8 և 9.9 տոկոսով: Միաժամանակ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտների գծով գրանցվել է անկում 10.9%-ով:



Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՀՀ պետական բյուջեի եկամուտներում հարկային եկամուտների, պետական տուրքերի ու պարտադիր սոցիալական ապահովության վճարների տեսակարար կշիռն աճել է 1.1 տոկոսային կետով և կազմել 91.9%: Նույն չափով նվազել է այլ եկամուտների տեսակարար կշիռը՝ կազմելով 4.8%: Իսկ պաշտոնական դրամաշնորհների տեսակարար կշիռը փոփոխություն չի կրել՝ կազմելով 3.3%:

Պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը



Հարկային եկամուտներ և պետական տուրքեր

ՀՀ 2011 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի եկամուտների 75.7%-ն ապահովվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի հաշվին, որոնք կազմել են շուրջ 140 մլրդ դրամ և 99.9%-ով ապահովել կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագիրը:

Հարկային եկամուտներ

2011 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները կազմել են 135.5 մլրդ դրամ՝ 99.9%-ով ապահովելով ճշտված ծրագրի կատարումը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի հարկային եկամուտներն աճել են 9.6%-ով կամ 11.9 մլրդ դրամով: Ընդ որում, հարկատեսակների մեծամասնության գծով արձանագրվել է մուտքերի աճ: Աճի հիմնական աղբյուր են հանդիսացել ավելացված արժեքի հարկը, շահութահարկը, ռոյալթին, եկամտահարկը և բնօգտագործման ու բնապահպանական վճարները:

Հարկային եկամուտների 50.7%-ն ապահովվել է *ավելացված արժեքի հարկի* հաշվին: Այն կազմել է 68.8 մլրդ դրամ և 8.3%-ով կամ 5.3 մլրդ դրամով գերազանցել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: ԱԱՀ-ի մուտքերից 40 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, ավելի քան 28.7 մլրդ դրամը՝ ներքին շրջանառությունից: Հարկ է նշել, որ ԱԱՀ-ի մուտքերի աճն ապահովվել է ապրանքների ու ծառայությունների ներքին շրջանառության հաշվին:

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՕ-208-Ն օրենքի համաձայն (ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 1-ից), Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքների կոմիսիոն հիմունքներով վաճառքի դեպքում ավելացված արժեքի հարկի շեմի որոշման նպատակով հաշվի է առնվում վաճառված ապրանքների ընդհանուր արժեքը (ներառյալ ավելացված արժեքի հարկը):

Նույն օրենքի համաձայն, ավելացված արժեքի հարկի շեմը չի կիրառվում՝

1) այն անձանց նկատմամբ, որոնց «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով առևտրային գործունեության (վաճառքի) նպատակներով Հայաստանի Հանրապետություն ներմուծած՝ օրենքով հաստատված ցանկում ընդգրկված ապրանքների (որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և չի գանձվում) իրացման գործարքներից առաջացող հարկվող շրջանառությունը հաշվետու տարվա որևէ պահին գերազանցում է 1 մլն դրամը:

Տվյալ դեպքում անձը համարվում է ավելացված արժեքի հարկ վճարող 1 մլն դրամի շեմը գերազանցելու պահից մինչև տվյալ օրացուցային տարվա ավարտը՝ 1 մլն դրամը գերազանցող մասի և այլ հարկվող գործարքների մասով:

2) «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11.1 հոդվածով սահմանված հարկման նպատակով փոխկապակցված համարվող անձանց նկատմամբ:

Զուգահեռաբար, «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի

28-ի ՀՕ-207-Ն օրենքի համաձայն, «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11.1 հոդվածով նախատեսվել է, որ իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված նաև այն դեպքերում, երբ գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 21-ի ՀՕ-179-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 1-ից) 15-րդ հոդվածը լրացվել է նոր կետով, որի համաձայն, ավելացված արժեքի հարկից ազատվում են ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման ջրի մատակարարման գործարքները:

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի հոկտեմբերի 20-ի ՀՕ-129-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 1-ից) 15-րդ հոդվածը լրացվել է նոր կետով, որի համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվում են դիզելային վառելիքի ներմուծումը և (կամ) օտարումը:

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-151-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 1-ից) 15-րդ հոդվածը լրացվել է նոր կետով, որի համաձայն, ավելացված արժեքի հարկից ազատվում են անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից իրավաբանական անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում գույքի ներդրումը:

Պետական բյուջեի հարկերի 6.6%-ն ապահովվել է *ակցիզային հարկի* հաշվին՝ կազմելով ավելի քան 8.9 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծվող ենթակապիզային ապրանքների հարկումից ստացվել է շուրջ 5 մլրդ դրամ, հանրապետությունում արտադրվող ենթակապիզային ապրանքների հարկումից՝ շուրջ 4 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ակցիզային հարկի մուտքերը նվազել են 6.4%-ով կամ 614.6 մլն դրամով, ինչը պայմանավորված է Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ենթակապիզային ապրանքներից մուտքերի 22.6%-ով կամ շուրջ 1.5 մլրդ դրամով անկմամբ: Միևնույն ժամանակ, հանրապետությունում արտադրվող ենթակապիզային ապրանքների հարկումից ստացված մուտքերն աճել են 26.7%-ով կամ 836.9 մլն դրամով:

«Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի հոկտեմբերի 20-ի ՀՕ-126-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 1-ից)՝

1) ԱՏԳԱԱ 2208 ապրանքային ծածկագրին դասվող տեղական արտադրության օղու համար ակցիզային հարկի դրույքաչափը սահմանվել է բացթողման գնի (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի) 30 տոկոսի, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 500 դրամի չափով, իսկ ներմուծվող օղու համար՝ մաքսային արժեքի 30 տոկոսի, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 500 դրամի չափով,

2) բենզինի 1 տոննայի համար ակցիզային հարկի դրույքաչափը սահմանվել է 25000 դրամ,

3) դիզելային վառելիքի համար ակցիզային հարկը սահմանվել է մաքսային արժեքի 10 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան 1 տոննայի համար 32500 դրամ:

Միաժամանակ, սահմանվել է, որ բենզինի 1 տոննայի համար սահմանված ակցիզային հարկի և օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված ավելացված արժեքի հարկի հանրագումարը 112000 ՀՀ դրամից պակաս լինելու դեպքում ակցիզային հարկն ավելացվում է այն չափով, որպեսզի բենզինի 1 տոննայի համար գանձվող ակցիզային հարկի և ավելացված արժեքի հարկի հանրագումարը հավասարվի 112000 ՀՀ դրամի:

Զուգահեռաբար, «Բենզինի և դիզելային վառելիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի հոկտեմբերի 20-ի ՀՕ-130-Ն օրենքի համաձայն 2011 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած է ճանաչվել «Բենզինի և դիզելային վառելիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների 15.3%-ն ապահովվել է *շահութահարկի* հաշվին՝ կազմելով շուրջ 20.8 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ *շահութահարկի* մուտքերն աճել են 12.5%-ով կամ 2.3 մլրդ դրամով:

2010 թվականի դեկտեմբերի 7-ի «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-180-Ն օրենքի համաձայն, 2011 թվականի հունվարի 1-ից վերացվել է ոռոգման ջրի մատակարարման գծով բնակչությանը, Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքներին, ջրօգտագործողների ընկերություններին, ջրօգտագործողների ընկերությունների միություններին, համատիրություններին, բազմաբնակարան շենքի սպասարկում (կառավարում) իրականացնող անձանց մատուցվող ծառայությունների (գործարքների) մատուցման գծով *շահութահարկի* վճարման ժամկետը մինչև դրանց իրացման դիմաց վճարման հաշվետու ժամանակաշրջանը հետաձգելու դրույթը:

2010 թվականի դեկտեմբերի 8-ի «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-189-Ն օրենքի համաձայն (ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 1-ից) *շահութահարկի* կանխավճարների մուծումները կատարվում են յուրաքանչյուր եռամսյակ, նախորդ տարվա

շահութահարկի փաստացի գումարի և (կամ) շահութահարկի հաշվարկային մեծության մեկ վեցերորդի չափով՝ յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 15-ից ոչ ուշ:

2010 թվականի դեկտեմբերի 22-ի «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-265-Ն օրենքի համաձայն (ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 9-ից) սահմանվել է, որ ներդրումային ֆոնդերի շահութահարկը հաշվարկվում է զուտ ակտիվների նկատմամբ՝ 0.01 տոկոս դրույքաչափով:

Միաժամանակ, վերը նշված օրենքով սահմանվել է, որ մինչև 2014 թվականի հունվարի 1-ը հարկատուի հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի յուրաքանչյուր վարձու աշխատողի համար հարկատուի կատարած կամավոր կուտակային կենսաթոշակային վճարումների 50 տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան տվյալ վարձու աշխատողի աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների 2.5 տոկոսի չափով: Նշյալ նվազեցումը, նույն օրենքի 16-րդ հոդվածի «գ.1» կետով սահմանված նվազեցման թույլատրելի չափի հետ չպետք է գերազանցի գործատուի կատարած՝ տվյալ վարձու աշխատողի աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների 7.5 տոկոսը:

2011 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 17.6 մլրդ դրամ *եկամտահարկ*՝ ապահովելով հարկային եկամուտների 13%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ եկամտահարկի մուտքերն աճել են 8.7%-ով կամ 1.4 մլրդ դրամով:

2010 թվականի նոյեմբերի 16-ի «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-165-Ն օրենքով սահմանվել է (ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 1-ից), որ համախառն եկամուտը եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա համար նվազեցվում է 32 500 դրամի չափով՝ նախկին 30000 դրամի փոխարեն:

2010 թվականի դեկտեմբերի 22-ի «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-275-Ն օրենքով սահմանվել է (ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 9-ից), որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամավոր կուտակային կենսաթոշակային ապահովագրության պայմաններով հարկ վճարողի կողմից իր համար և (կամ) հարկ վճարողի համար երրորդ անձի (այդ թվում՝ գործատուի) կողմից կատարվող կուտակային կենսաթոշակային ապահովագրության վճարները՝ հարկ վճարողի համախառն եկամտի 5 տոկոսը չգերազանցող չափով, նվազեցվում են հարկատուի համախառն եկամտից:

Մաքսագրուրքի գծով մուտքերը կազմել են ավելի քան 6.8 մլրդ դրամ՝ 2.2%-ով կամ 146 մլն դրամով գերազանցելով 2010 թվականի նույն ժամանակահատվածի ցուցանիշը և ապահովելով պետական բյուջեի հարկային եկամուտների 5.1%-ը:

2010 թ. դեկտեմբերի 22-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-25-Ն), որով արգելվել է ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից ԱՏԳ ԱԱ 8702 և 8703 ծածկագրերին դասվող ապրանքների (ավտոմեքենաների) Հայաստանի Հանրապետության տարածք ժամանակավոր ներմուծումը: Նշված օրենքի կիրարկման արդյունքում վերահայտարարագրվել են մինչև ս.թ. փետրվարի 5-ը «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ձևակերպված տրանսպորտային միջոցները և վերջիններիս «ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ձևակերպման ժամանակ մաքսային վճարների վճարման համար հայտարարատուներին Հայաստանի Հանրապետության կառավարության ս.թ. փետրվարի 24-ի թիվ 161-Ն որոշմամբ սահմանված կարգով տրամադրվել են անտոկոս բյուջետային վարկեր, որոնք ենթակա են մարման 6 ամսվա ընթացքում:

Նույն օրենքով մի շարք ապրանքների (մասնավորապես՝ հաց, հացամթերք, ջեռուցման վառարաններ, պոմպեր, ջեռոցներ, վառարաններ, արդյունաբերական որոշ մեքենաներ, հաղորդալարեր) ներմուծման համար մաքսատուրքի դրույքաչափը 0-ից բարձրացվել է մինչև 10 տոկոս:

Գործունեության առանձին տեսակներից գանձված *հաստատագրված վճարներն* առաջին եռամսյակում կազմել են ավելի քան 5.1 մլրդ դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 3.8%-ը: Նշված ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 5.8%-ով կամ 313 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է գործունեության որոշ տեսակների՝ հարկման ընդհանուր դաշտ անցնելու հանգամանքով:

2010 թվականի դեկտեմբերի 22-ի «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-214-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 1-ից) փոփոխություններ են կատարվել օրենքի 53-րդ հոդվածում, ինչի արդյունքում ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեության համար սահմանված հաստատագրված վճարի սահմանային ամսական 800 հազար դրամ չափը փոխարինվել է եռամսյակային 2.400 հազար դրամ չափով:

Վերոհիշյալ փոփոխությունները մինչև այդ գործող սահմանային չափի հետ համեմատության պայմաններում պետական բյուջեի եկամուտների վրա կարող են ազդեցություն թողնել այն դեպքերում, երբ եռամսյակի որևէ ամսվա ընթացքում ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեությունից հարկ վճարողի իրացման շրջանառությունը գերազանցի 800 հազար դրամը, սակայն եռամսյակային կտրվածքով նշված գործունեությունից ստացված համախառն եկամտի

հանրագումարը չգերազանցի 2.400 հազար դրամը: Ամսվա ընթացքում իրացումից հասույթը 800 հազար դրամը գերզանցելու դեպքում նախկինում գործող օրենսդրության համաձայն տվյալ հարկ վճարողի գործունեությունից տվյալ ամսվա հասույթը կհարկվեր հարկման ընդհանուր համակարգում, իսկ 2011 թվականի հունվարի 1-ի գործող կարգով նշված դեպքերում հարկ վճարողի կողմից իրականացված գործունեությունը կշարունակի հարկվել հաստատագրված վճարների համակարգում:

2011 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 2.7 մլրդ դրամ *բնօգտագործման և բնապահպանական վճարներ*, որից 1.3 մլրդ դրամը վճարվել է օգտակար հանածոների արդյունահանման դիմաց, 725.6 մլն դրամը՝ այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու, 300.1 մլն դրամը՝ ՀՀ ներմուծվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված մուտքերն ավելացել են 57.5%-ով կամ 976.5 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված օգտակար հանածոների արդյունահանման և այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու համար գանձվող վճարների աճով՝ համապատասխանաբար 1.7 անգամ և 2 անգամ:

2011 թվականի առաջին եռամսյակում ավելի քան 4.7 մլրդ դրամ պետական բյուջե է մուտքագրվել *այլ հարկերից*: Մասնավորապես՝ 1.7 մլրդ դրամ է կազմել «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթին, 999.3 մլն դրամ՝ ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) վճարները, 465 մլն դրամ՝ ԱՏԳԱԱ 2208 ապրանքային ծածկագրին դասվող օդու ներմուծման թույլտվության համար սակագնային քվոտայի վճարը, 572.4 մլն դրամ՝ ճանապարհային վճարները, 178.9 մլն դրամ՝ կոնցեսիոն վճարը, 134.4 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 410.9 մլն դրամ՝ հարկային օրենսդրության խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները, 10.5 մլն դրամ՝ արտոնագրային վճարները և 246.3 մլն դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ հարկերի փաստացի ցուցանիշն աճել է 2.4 անգամ կամ 2.7 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ռոյալթիի և ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման վճարների աճով: Նշենք, որ ռոյալթիի գծով մուտքերն առաջին եռամսյակում կազմել են ավելի քան 1.7 մլրդ դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում փաստացի մուտքագրված 190.8 մլն դրամի և ընթացիկ տարվա առաջին եռամսյակում նախատեսված 1 մլրդ դրամի դիմաց:

Պետական փուլը

2011 թվականի առաջին եռամսյակում պետական տուրքի գծով բյուջեի մուտքերը կազմել են ավելի քան 4.4 մլրդ դրամ՝ ապահովելով ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված ցուցանիշի 99.2%-ը: Չնայած պետական տուրքերի ծրագրային ցուցանիշն ընդհանուր առմամբ կատարվել է, առանձին աղբյուրներից ստացված մուտքերն ունեցել են տարբեր կատարողական: Մասնավորապես՝ կանխատեսված ցուցանիշը համապատասխանաբար 19.6, 2.7, 4.6 և 10.6 տոկոսով զիջել են հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների իրականացման, օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների, լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու և դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ տրվող վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար գանձվող տուրքերի գծով: Ծրագրի գերազանցում է արձանագրվել գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված գործողությունների (5.6 անգամ), ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների (15.2%-ով), պետական գրանցման (6.7%-ով), ՀՀ քաղաքացիություն ստանալու և ՀՀ քաղաքացիության փոփոխման (43.8%-ով) համար գանձվող վճարների գծով:

2010 թվականի առաջին եռամսյակի համեմատ պետական տուրքի մուտքերն ավելացել են 27%-ով կամ 945.5 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց ելքի, լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու, պետական գրանցման և ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների իրականացման համար գանձվող տուրքերի ավելացմամբ:

1) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխությամբ բարձրացվել են հեռահաղորդակցության բնագավառի՝ հեռուստահաղորդումների եթերային հեռարձակում իրականացնելու, ինչպես նաև հեռուստահաղորդումների կաբելային (մալուխային) հեռարձակման համար սահմանված պետական տուրքերի դրույքաչափերը (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2010 թվականի հոկտեմբերից):

2) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարվել է համապատասխան լրացում՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի աշխա-

տավայրից (բաժնից) դուրս կատարվող քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար պետական տուրքը գանձվում է սահմանված պետական տուրքի դրույքաչափերի տասնապատիկի չափով (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2010 թվականի հոկտեմբերից):

3) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխությամբ դադարել են գործել ավտոմեքենայի կորցրած պետական համարանիշը վերականգնելու (բազային տուրքի 24-ապատիկի չափով), ավտոմեքենայի (մոտոցիկլետի) կորցրած տեխնիկական անձնագրի (գրանցման վկայականի) կրկնօրինակ տալու համար (բազային տուրքի 12-ապատիկի չափով), ինչպես նաև վարորդական իրավունքի կորցրած վկայականի կրկնօրինակը տալու (բազային տուրքի 24-ապատիկի չափով) համար նախատեսված պետական տուրքերը (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2010 թվականի դեկտեմբերից):

4) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված մեկ այլ փոփոխությամբ մոտոփոխադրամիջոցների, կցորդների և կիսակցորդների հաշվառման համարանիշ տալու համար սահմանվել է բազային տուրքի վեցապատիկի չափով պետական տուրք:

5) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխությամբ փոփոխվել են հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար սահմանված պետական տուրքերի դրույքաչափերը (միասնականացվել են, միաժամանակ որոշ դրույքաչափեր սահմանվել են գործողից բարձր, իսկ որոշ դրույքաչափեր՝ գործողից ցածր) (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարից):

6) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված մեկ այլ փոփոխությամբ դադարել է գործել գյուղատնտեսության բնագավառի անասնաբուժության համար (տարեկան բազային տուրքի 5-ապատիկի չափով), հեռահաղորդակցության բնագավառի շարժական կապի ծառայությունների մատուցման (տարեկան բազային տուրքի 100-ապատիկի չափով), շրջակա միջավայրի պահպանության բնագավառի ավտոտրանսպորտային միջոցներից աղտոտող նյութերի արտանետումների չափումների (յուրաքանչյուր չափիչ կետի համար) համար (տարեկան բազային տուրքի 150-ապատիկի չափով), որակի ստանդարտացման, սերտիֆիկացման, չափագիտության բնագավառի չափման միջոցների արտադրության համար (տարեկան բազային տուրքի 25-ապատիկի չափով), տրանսպորտի բնագավառի կանոնավոր օդային հաղորդակցության համար (տարեկան բազային տուրքի 15000-ապատիկի չափով), սոցիալական պաշտպանության բնագավառի մանկատների կազմակերպման, երեխաների ցերեկային խնամքի կազմակերպման, երեխաների ժամանակավոր խնամքի կազմակերպման համար (տարեկան բազային տուրքի 100-ապատիկի չափով) և ծեր և հաշմանդամ քաղաքացիների խնամքի և սպասարկման կազմակերպման համար (տարեկան տուրքի 100-ապատիկի չափով), գործունեության այլ բնագավառի՝ սնանկության կառավարչի գործունեության իրականացման համար (տարեկան

բազային տուրքի 25-ապատիկի չափով), տեղագրական քարտեզագրման և հողաշինարարական աշխատանքների իրականացման համար (տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով), ռիելտորական գործունեության համար (տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով), հատուկ պաշտպանվածություն պահանջող պետական նշանակության փաստաթղթերի տպագրական աշխատանքների կատարման համար (տարեկան բազային տուրքի 1000-ապատիկի չափով), թանկարժեք մետաղների զտարկում, բանկային ոսկու և ստանդարտացված ձուլակտորների արտադրություն համար (տարեկան բազային տուրքի 1000-ապատիկը), զբոսաշրջության բնագավառի զբոսավարների գործունեության լիցենզիաների համար (տարեկան բազային տուրքի 10-ապատիկի չափով), ուղեկցորդների գործունեության լիցենզիաների համար (տարեկան բազային տուրքի 10-ապատիկի չափով), մաքսային բնագավառի մաքսային միջնորդական գործունեության համար (տարեկան բազային տուրքի 200-ապատիկի չափով) նախատեսված պետական տուրքերը (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարից):

7) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխությամբ բարձրացվել են քաղաքաշինության բնագավառում սահմանված պետական տուրքերը: Միաժամանակ մեկ այլ փոփոխությամբ գործունեության այլ բնագավառների թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի մասով հանվել են դրանց մշակման, բացթողնման, ձեռքբերման, գիտական և ուսումնական նպատակով օգտագործման, վերամշակման, փորձաքննություն անցկացնելու համար սահմանված պետական տուրքերը (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարից):

8) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված մեկ այլ փոփոխությամբ սահմանվել են՝ ներդրումային ընկերություններին որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ վերագրանցելու համար բազային տուրքի քսանապատիկի չափով պետական տուրք, Հայաստանի Հանրապետությունում գրանցված բանկերի, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների ներկայացուցչությունները գրանցելու համար բազային տուրքի հնգապատիկի չափով պետական տուրք, ֆոնդի կառավարման գործունեության իրականացման համար տարեկան բազային տուրքի 100-ապատիկի չափով պետական տուրք:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ

2011 թվականի առաջին եռամսյակում պարտադիր սոցիալական ապահովության վճարներից բյուջետային եկամուտները կազմել են ավելի քան 29.9 մլրդ դրամ, որից շուրջ 25.2 մլրդ դրամը վճարվել է գործատուների կողմից, 3.8 մլրդ դրամը՝ աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից, 949.6 մլն դրամը՝ անհատ ձեռնարկատերերի կողմից: Պարտադիր սոցիալական

ապահովության վճարները 4.6%-ով (1.3 մլրդ դրամով) գերազանցել են եռամսյակային ծրագիրը և 14.2%-ով (3.7 մլրդ դրամով)՝ 2010 թվականի նույն ժամանակահատվածի փաստացի ցուցանիշը: Պարտադիր սոցիալական ապահովության վճարների աճը հիմնականում ապահովվել է գործատուների կողմից կատարված վճարումների հաշվին:

Պաշտոնական դրամաշնորհներ

2011 թվականի առաջին եռամսյակում արտաքին դոնորների կողմից ՀՀ պետական բյուջեին տրամադրվել են շուրջ 6.1 մլրդ դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով եռամսյակային ծրագրի 43.9%-ը: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է նրանով, որ չեն ստացվել Եվրամիության «Ընդհանուր բյուջետային աջակցություն» ծրագրի գծով նախատեսված 7 մլրդ դրամի դրամաշնորհը և թվով 15 նպատակային ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցները: Միաժամանակ նշենք, որ ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ստացվել են ծրագրված միջոցներից 20.2%-ով (887.0 մլն դրամով) ավել միջոցներ: Հաշվետու ժամանակահատվածում նպատակային դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ստացվել է ավելի քան 5.9 մլրդ դրամ, որից 5.3 մլրդ դրամը՝ ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» ծրագրի շրջանակներում, 425.7 մլրդ դրամը (նախատեսվածի 53.6%-ը)՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում, 129.6 մլն դրամ (նախատեսվածի 62.8%-ը)՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում և 25.8 մլն դրամ (նախատեսվածի 6.4%-ը)՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում: Առաջին եռամսյակում 141.4 մլն դրամ մուտքագրվել է պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվներին՝ նրանց կողմից իրականացվող ծրագրերի ֆինանսավորման համար:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պաշտոնական դրամաշնորհներից պետական բյուջեի մուտքերն աճել են 9.9%-ով կամ 549.1 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է «Հազարամյակի մարտահրավեր» ծրագրի շրջանակներում ստացված գումարների 1.4 մլրդ դրամ կամ 34.4%-ով աճով:

Այլ եկամուտներ

Պետական բյուջեի այլ եկամուտները 2011 թվականի առաջին եռամսյակում կազմել են ավելի քան 8.9 մլրդ դրամ և ապահովել 113.8% կատարողական: Ծրագրի գերազանցումը հիմնականում

պայմանավորված է բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների, ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարների, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերի և օրենքներով ու այլ իրավական ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների ծրագրի գերազանցմամբ: Մասնավորապես՝ բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարներն առաջին եռամսյակում կազմել են շուրջ 1.5 մլրդ դրամ կամ ծրագրվածից 49%-ով ավելի: Իրավաբանական անձանց բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժինները կազմել են 39.1 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 55.2%-ը՝ 3.6 անգամ գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

Հաշվետու ժամանակահատվածում 539.6 մլն դրամ են կազմել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերը, որոնք 60.1%-ով գերազանցել են ծրագիրը և 3.8 անգամ՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտները կազմել են 77.9 մլն դրամ՝ 11.2%-ով գերազանցելով ծրագրային ցուցանիշը: Վերջինս հիմնականում պայմանավորված է պետական պահուստի հողերի վարձակալության դիմաց 16.8 մլն դրամի մուտքերով, որոնք ծրագրով նախատեսված չէին, ինչպես նաև պետական անտառների և անտառային հողերի օգտագործման վճարների ծրագրի գերազանցմամբ 2.7 անգամ, որոնք կազմել են 12 մլն դրամ: 49.1 մլն դրամ է ստացվել պետական ձեռնարկությունների և գույքի վարձակալության դիմաց՝ կազմելով ծրագրի 74.9%-ը: 2010 թվականի առաջին եռամսյակի համեմատ պետական գույքի վարձակալությունից եկամուտները նվազել են 32.1%-ով՝ հիմնականում պայմանավորված ձեռնարկությունների և գույքի (բացառությամբ հողի) վարձավճարների նվազմամբ:

Ծրագրի 90.5%-ով գերազանցում է արձանագրվել պետության տված վարկերի օգտագործման դիմաց ստացված տոկոսների գծով, որոնք կազմել են շուրջ 563.6 մլն դրամ: Մասնավորապես՝ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարները կազմել են 471.3 մլն դրամ՝ 95.1%-ով գերազանցելով ծրագիրը: Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարները կազմել են շուրջ 92.3 մլն դրամ՝ նախատեսված 54.2 մլն դրամի դիմաց, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ Վրաստանի կառավարության կողմից նախորդ տարվա պարտավորության գծով կատարված 38.1 մլն դրամ վճարումը ՀՀ Գանձապետական միասնական հաշվին մուտքագրվել է ընթացիկ տարվա հունվարին:

Տիրագուրկ, ժառանգության իրավունքով, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից նվիրատվության կարգով պետությանը որպես սեփականություն անցած դրամական միջոցները կազմել են շուրջ 14.8 մլն դրամ կամ ծրագրի 76.3%-ը:

Շուրջ 1.3 մլրդ դրամ (98.1%) պետական բյուջե է մուտքագրվել իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից՝ 7.1%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը:

Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտները կազմել են շուրջ 5 մլրդ դրամ՝ նախատեսված 4.8 մլրդ դրամի դիմաց, կամ ծրագիրը կատարվել է 104%-ով:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտները նվազել են 10.9%-ով կամ 1.1 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների գծով մուտքերի նվազմամբ:

«ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

«Վ կառավարության ծրագրով 2011 թվականի առաջին եռամսյակում նախատեսվել էր 223 մլրդ դրամ ծախսերի կատարում: Հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետի և 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, որոնց համաձայն ՀՀ պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական մարմինների արտաբյուջետային միջոցները և ՀՀ պետական բյուջեից առանց սահմանափակման իրականացվող ծախսերը, ինչպես նաև կիրառելով պետական բյուջեում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքով ՀՀ կառավարությանը վերապահված լիազորությունները՝ ՀՀ պետական բյուջեի ծախսերի առաջին եռամսյակի ծրագիրը ճշտվել է՝ կազմելով 228.5 մլրդ դրամ, որի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 194.2 մլրդ դրամ: Պետական բյուջեի ծախսերի եռամսյակային ծրագիրը կատարվել է 85%-ով, ընդ որում, շեղումների ընդհանուր գումարի 86.1%-ը բաժին է ընկել ընթացիկ ծախսերին: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի ծախսերն էականորեն չեն փոփոխվել՝ ավելացել են ընդամենը 0.2%-ով կամ 318.8 մլն դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում 167.6 մլրդ դրամ է տրամադրվել ընթացիկ ծախսերին, որոնց եռամսյակային ծրագիրը կատարվել է 85%-ով: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ նշված ծախսերն աճել են 4%-ով կամ 6.4 մլրդ դրամով:

Ընթացիկ ծախսերից 15.3 մլրդ դրամն ուղղվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատավարձերի վճարմանը՝ կազմելով ծրագրի 90.8%-ը, որը 6.1%-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: 911.5 մլն դրամ է տրամադրվել պարտադիր սոցիալական ապահովության վճարներին՝ կազմելով նախատեսվածի 74.6%-ը և 1.1%-ով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման նպատակով պետական բյուջեից օգտագործվել է 29.5 մլրդ դրամ, որը կազմում է ծրագրի 81.8%-ը: 2010 թվականի առաջին եռամսյակի համեմատ նշված ծախսերն աճել են 5.6%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է պայմանագրային ծառայությունների ձեռքբերման ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում 7.6 մլրդ դրամ ուղղվել է պետական պարտքի սպասարկմանը՝ կազմելով եռամսյակային ծրագրի 93.2%-ը: Մասնավորապես՝ 5.6 մլրդ դրամ տրամադրվել է ներքին պարտքի և շուրջ 2 մլրդ դրամ՝ արտաքին պարտքի սպասարկմանը: Պետական պարտքի սպասարկման ծախսերը 22.4%-ով գերազանցել են նախորդ տարվա նույն ցուցանիշը, որը տեղի է ունեցել հիմնականում ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերի աճի հաշվին:

Անցած եռամսյակում պետական բյուջեից տրամադրվել են շուրջ 3.9 մլրդ դրամի սուբսիդիաներ՝ կազմելով ծրագրի 92.7%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն աճել են 2.3%-ով կամ 88.4 մլն դրամով:

Պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 11%-ը կամ 18.4 մլրդ դրամ տրամադրվել է դրամաշնորհներին՝ ապահովելով 78.6% կատարողական: Մասնավորապես՝ 8.1 մլրդ դրամ տրամադրվել է համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաների ֆինանսավորմանը, որը կատարվել է 100%-ով: Մնացած դրամաշնորհների գծով արձանագրվել են որոշակի շեղումներ: 2010 թվականի առաջին եռամսյակի համեմատ դրամաշնորհները նվազել են 10%-ով՝ հիմնականում պայմանավորված այլ ընթացիկ դրամաշնորհների կրճատմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 37.2%-ն ուղղվել է սոցիալական նպաստներին և կենսաթոշակներին, որոնք կազմել են շուրջ 62.3 մլրդ դրամ կամ եռամսյակային ծրագրի 91.6%-ը: Մասնավորապես՝ 46.6 մլրդ դրամ է տրամադրվել կենսաթոշակներին, 15.7 մլրդ դրամ՝ նպաստներին, որոնք կազմել են ծրագրի համապատասխանաբար 94.6%-ը և 83.9%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նպաստների և կենսաթոշակների ծախսերն աճել են 7.3%-ով կամ 4.2 մլրդ դրամով:

2011 թվականի առաջին եռամսյակում 29.7 մլրդ դրամ է տրամադրվել այլ ծախսերին՝ կազմելով եռամսյակային ծրագրի 75.7%-ը: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ ծախսերն աճել են 1.1%-ով:

ՀՀ պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները հաշվետու ժամանակահատվածում կազմել են շուրջ 26.7 մլրդ դրամ կամ ծրագրի 84.9%-ը: Մասնավորապես՝ 26.7 մլրդ դրամ տրամադրվել է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին՝ կազմելով առաջին եռամսյակի ծրագրի 85.1%-ը և 18.6%-ով զիջելով 2010 թվականի ցուցանիշը: Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը կազմել են 78.6 մլն դրամ՝ կանխատեսված 6.2 մլն դրամի դիմաց: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված մուտքերն էականորեն չեն փոփոխվել:

Գործառական դասակարգում

2011 թվականի առաջին եռամսյակում ընդհանուր քնույթի հանրային ծառայությունների գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 29.9 մլրդ դրամ՝ 79.8%-ով ապահովելով եռամսյակային ծրագրի կատարումը: Շեղումը հիմնականում առաջացել է «Ֆինանսական և հարկաբյուջետային

հարաբերություններ», «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)», «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» դասերի գծով: 2010 թվականի առաջին եռամսյակի համեմատ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերն ընդհանուր առմամբ գրեթե չեն փոփոխվել:

Օրենսդիր և գործադիր մարմինների ու պետական կառավարման ծախսերը առաջին եռամսյակում կազմել են 2.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 78.4%-ը: Ընդ որում, դասի գրեթե բոլոր ծրագրերում արձանագրվել են շեղումներ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ օրենսդիր և գործադիր մարմինների ու պետական կառավարման ծախսերն աճել են 10.8%-ով՝ հիմնականում պայմանավորված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների, ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի և պատգամավորների պահպանման ծախսերի ավելացմամբ:

Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերությունների ծրագրերին հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է 6.8 մլրդ դրամ, որը կազմում է նախատեսված ցուցանիշի 61.6%-ը: Հատկացումների զգալի մասը՝ 3.7 մլրդ դրամ, ուղղվել է արտահանողներին ավելացված արժեքի հարկի գծով առաջացած գերավճարների վերադարձին, որը կատարվել է 61.1%-ով: Զգալի տնտեսումներ առկա են նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների օգտագործման ծախսերում, որոնք կատարվել են ընդամենը 15.4%-ով և կազմել 254 մլն դրամ: 41.6%-ով են կատարվել ՀՀ գանձապետական համակարգի վճարահաշվարկային սպասարկման ծախսերը, որոնք կազմել են շուրջ 19 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերությունների ծախսերը նվազել են 21.1%-ով կամ 1.8 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի վերադարձի համար հատկացված միջոցների կրճատմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 2.2 մլրդ դրամ է տրամադրվել *արտաքին հարաբերությունների* ծրագրերին, որը կազմել է առաջին եռամսյակի ծրագրային հատկացումների 93.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման, արտասահմանյան պաշտոնական գործուղումների, ինչպես նաև միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության ծախսերի տնտեսմամբ: Մասնավորապես՝ ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման ծախսերը կազմել են 1.4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 96.6%-ը: Արտասահմանյան պաշտոնական գործուղումների ծախսերը կատարվել են 66.9%-ով և կազմել 66.9 մլն դրամ: Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարները կազմել են 376.5 մլն դրամ կամ նախատեսվածի 94.7%-ը: Նախորդ տարվա նույն

ժամանակահատվածի համեմատ արտաքին հարաբերությունների ծախսերն աճել են 7.9%-ով (159.6 մլն դրամով)՝ հիմնականում պայմանավորված Լոս Անջելեսում ՀՀ գլխավոր հյուպատոսության շենքի ձեռքբերմամբ, ինչպես նաև միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարների և արտասահմանյան պաշտոնական գործուղումների ծախսերի աճով:

Ընդհանուր բնույթի ծառայությունների խմբի ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 373 մլն դրամ կամ նախատեսվածի 65%-ը: Շեղումը հիմնականում արձանագրվել է ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայությունների դասում:

Աշխատակազմի (կադրերի) գծով ընդհանուր բնույթի ծառայությունների դասին տրամադրվել է 76.7 մլն դրամ, որը կազմել է առաջին եռամսյակի ծրագրային հատկացումների 96.5%-ը: Շեղումն արձանագրվել է տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերի տնտեսման արդյունքում, որոնք կատարվել են 92.9%-ով և կազմել 36.9 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են 10.6%-ով:

Ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայությունների դասին տրամադրվել է 180.6 մլն դրամ, որը կազմել է առաջին եռամսյակի ծրագրային հատկացումների 53%-ը: Ընդ որում, տվյալ դասի բոլոր ծրագրերում արձանագրվել են շեղումներ: Չի կատարվել «Մարդահամար-2011» դրամաշնորհային ծրագիրը (71.5 մլն դրամ), տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների (9 մլն դրամ) և գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացման (2.7 մլն դրամ) ծրագրերը: 2011 թվականի մարդահամարի նախապատրաստման աշխատանքների կազմակերպման և պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրման ծրագրերի շրջանակներում կատարվել են համապատասխանաբար 7.1 մլն դրամ և 42 մլն դրամ կամ նախատեսվածի 13.7%-ը և 73.7%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայությունների դասի ծախսերն աճել են 1.9%-ով:

Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների դասին տրամադրվել է 115.7 մլն դրամ, որը կազմել է հաշվետու ժամանակահատվածի ծրագրային հատկացումների 75.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերի ցածր կատարողականով, որը կազմել է 62.6% կամ 46.8 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ընդհանուր բնույթի այլ ծառայությունների ծախսերն աճել են 2.9%-ով:

2011 թվականի առաջին եռամսյակում պետական բյուջեից ավելի քան 1.3 մլրդ դրամ է տրամադրվել *ընդհանուր բնույթի հեղափոխական աշխատանքներին*՝ կազմելով ծրագրային հատկացումների 85.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է տվյալ դասում ներառված՝

գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման և ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականով, որոնք կազմել են համապատասխանաբար 93.4% կամ 1.2 մլրդ դրամ և 39.9% կամ 41.4 մլն դրամ: 2010 թվականի առաջին եռամսյակի համեմատ ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանքների ծախսերն աճել են 18.7%-ով՝ հիմնականում պայմանավորված գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման ծախսերի ավելացմամբ:

Առաջին եռամսյակի ընթացքում *ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներին* տրամադրվել է 25.3 մլն դրամ, որը կազմել է ծրագրային հատկացումների 13.3%-ը: Խմբի ցածր կատարողականը պայմանավորված է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների համար նախատեսված միջոցները՝ 164.1 մլն դրամ, չօգտագործելու հանգամանքով, որի արդյունքում 2010 թվականի առաջին եռամսյակի համեմատ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների ծախսերը նվազել են 92.3%-ով:

Այլ դասերին չպատկանող ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին տրամադրվել է շուրջ 1.1 մլրդ դրամ, որը կազմել է առաջին եռամսյակի ծրագրային հատկացումների 43.1%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի բարեփոխումների երկրորդ ծրագրի (18.9%), էլեկտրոնային հասարակության և ինովացիոն ծրագրի նախապատրաստման կանխավճարի ծրագրի (5.8%) և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի գծով իրականացվող ծախսերի (73.4%) ցածր կատարողականով: Բացի այդ, տվյալ խմբում նախատեսված 7 ծրագրեր հաշվետու ժամանակահատվածում չեն կատարվել, մասնավորապես՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երևան քաղաքի պինդ աղբի կառավարման նպատակով պետական մասնավոր համագործակցության կառույցի համար գործարքի խորհրդատվական աջակցության, Ազգային Ժողովի քաղաքականության ձևավորման և հանրության հետ երկխոսության կարողությունների հզորացման, Հանրային հատվածի ներքին աուդիտի իրականացման, Ոչ առևտրային կազմակերպությունների ֆիդուցիար վերահսկողության փորձնական և ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագրերը: Այլ դասերին չպատկանող ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերը նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ աճել են 23.3%-ով՝ հիմնականում պայմանավորված արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

2011 թվականի առաջին եռամսյակում *պետական պարտքի գծով գործառնություններին* տրամադրվել է շուրջ 7.6 մլրդ դրամ, որը կազմել է առաջին եռամսյակի ծրագրային հատկացումների 93.2%-ը: Տնտեսումներ են արձանագրվել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պետական պարտքի սպասարկման ծախսերում: Նախորդ տարվա համեմատ պետական պարտքի սպասարկման ծախսերն աճել են 22.4%-ով, որը հիմնականում պայմանավորված է ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում *կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտները* կազմել են շուրջ 8.1 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Հաշվետու ժամանակահատվածում *պաշտպանության* բնագավառին հատկացվել է 27.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 92.1%-ով կատարողական: Մասնավորապես՝ 26.5 մլրդ դրամ հատկացվել է ռազմական պաշտպանությանը, 509.9 մլն դրամ՝ այլ դասերին չպատկանող պաշտպանական ծախսերին, 30.4 մլն դրամ՝ արտաքին ռազմական օգնությանը և 25.1 մլն դրամ՝ պաշտպանության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքներին: Նախորդ տարվա համեմատ պաշտպանության ծախսերն աճել են 11.9%-ով կամ 2.9 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ռազմական կարիքների բավարարման ծախսերի աճով:

Հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության բնագավառին 2011 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 13.3 մլրդ դրամ՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 85.1% կատարողական: Ընդ որում, բոլոր հինգ խմբերում առկա են ծրագրից շեղումներ, որոնց գերակշիռ մասը բաժին է ընկել ոստիկանության, ազգային անվտանգության և դատարանների դասերին: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության բնագավառի ծախսերն աճել են 7.1%-ով կամ 878.8 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված Ազգային անվտանգության, ոստիկանության և կալանավայրերի ծախսերի աճով:

Նշված բաժնի ծախսերի 71.4%-ն ուղղվել է հասարակական կարգի և անվտանգության պահպանության, 6%-ը՝ փրկարար ծառայության, 12.1%-ը՝ դատական գործունեության և իրավական պաշտպանության, 3.2%-ը՝ դատախազության, 7.3%-ը՝ կալանավայրերի ծախսերի ֆինանսավորմանը:

Հաշվետու եռամսյակում շուրջ 9.5 մլրդ դրամ տրամադրվել է *հասարակական կարգի և անվտանգության* բնագավառի ծրագրերին՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 85.2% կատարողական: Նշված գումարից 7 մլրդ դրամ տրամադրվել է ոստիկանությանը, 2.5 մլրդ դրամ՝ ազգային անվտանգությանը: Շեղումը հիմնականում առաջացել է ՀՀ կառավարությանն առընթեր

նստիկանության արտաբյուջետային միջոցների հաշվին նախատեսված ծախսերի գծով: 2010 թվականի առաջին եռամսյակի համեմատ նստիկանության և ազգային անվտանգության ծախսերն աճել են համապատասխանաբար 3.3%-ով և 12.4%-ով: Փրկարար ծառայության ծախսերը նույն ժամանակահատվածում կազմել են 797.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 84.9%-ով կատարում և 5.9%-ով գերազանցելով 2010 թվականի առաջին եռամսյակի ծախսերը: Դատական գործունեությանը և իրավական պաշտպանությանը տրամադրվել է 1.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 84%-ով կատարում: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ դատարանների պահպանման ծախսերի ցածր (76.8%) կատարողականով: 2010 թվականի առաջին եռամսյակի համեմատ դատական գործունեության և իրավական պաշտպանության ծախսերն աճել են 6.2%-ով՝ հիմնականում պայմանավորված դատարանների պահպանման, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրի և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության պահպանման ծախսերի ավելացմամբ:

Դատախազության խմբի ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 426.2 մլն դրամ կամ ծրագրի 76.9%-ը: 2010 թվականի առաջին եռամսյակի համեմատ նշված ծախսերն աճել են 6.6%-ով:

972 մլն դրամ է տրամադրվել *կալանավայրերին*՝ կազմելով ծրագրի 90.1%-ը, որը 29.4%-ով գերազանցել է նախորդ տարվա առաջին եռամսյակի համապատասխան ցուցանիշը:

2011 թվականի առաջին եռամսյակում *տնտեսական հարաբերությունների* բաժնի ծախսերը կազմել են 15.3 մլրդ դրամ և ապահովել եռամսյակային ծրագրի 78.5% կատարողական: Ծախսերի նշված ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է տրանսպորտի, գյուղատնտեսության և ոռոգման ոլորտների ծախսերի կատարողականներով: Բացի նշված ոլորտներից, բաժնի ծախսերի մյուս խմբերում ևս արձանագրվել են ծրագրից շեղումներ, բացառությամբ կապի և տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական ու նախագծային աշխատանքների խմբերի, որոնց ծրագիրն ամբողջությամբ կատարվել է, և «Վառելիք և էներգետիկա» խմբի, որի գծով արձանագրվել է ծրագրի գերազանցում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տնտեսական հարաբերությունների ծախսերը նվազել են 40.1%-ով կամ ավելի քան 10.2 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է վառելիքի և էներգետիկայի, ինչպես նաև ճանապարհային տրանսպորտի ու ոռոգման ծախսերի նվազմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում *ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերությունների* ծախսերը կազմել են 310.4 մլն դրամ՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 72.2%-ը: Մասնավորապես՝ չեն օգտագործվել «Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ»-ի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը պետական աջակցության (58 մլն դրամ), ՓՄՁ սուբյեկտներին աջակցության (30 մլն դրամ) և Գյումրու տեխնոպարկի

գործունեության իրականացման (6.5 մլն դրամ) ծրագրերի համար նախատեսված միջոցները: Համապատասխանաբար 83.8%-ով (36.9 մլն դրամ) և 86.5%-ով (115.4 մլն դրամ) են կատարվել գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների և համապատասխան նախարարությունների աշխատակազմերի պահպանման ծախսերը: Խմբում ընդգրկված երեք ծրագրերի գծով արձանագրվել է 100% կատարողական: Մասնավորապես՝ արտասահմանում առևտրային ներկայացուցչությունների պահպանման ծախսերը կազմել են շուրջ 20.2 մլն դրամ, հիդրոօդերևութաբանության ծառայությունների ծախսերը՝ 106.7 մլն դրամ, տնտեսական գործունեության արդյունավետ վարման և աջակցման միջոցառումների իրականացման ծախսերը՝ 31.3 մլն դրամ: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ նշված խմբի ծախսերը նվազել են 38.4%-ով կամ 193.5 մլն դրամով: Վերջինս մասամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ 2010 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվել են «Շանհայ էքսպո 2010» համաշխարհային ցուցահանդեսին ՀՀ մասնակցության և «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ԲԲԸ-ի կանոնադրական խնդիրների իրականացմանը պետական աջակցության ծրագրերը, որոնք 2011 թվականի պետական բյուջեում չեն նախատեսվել: Ծախսերի անկումը մասամբ էլ պայմանավորված է «Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ»-ի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը պետական աջակցության և ՓՄՁ սուբյեկտներին աջակցության համար նախատեսված միջոցները չօգտագործելու հանգամանքով:

2011 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեից *գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնաբուծության և որսորդության* խմբին ուղղվել է ավելի քան 8.5 մլրդ դրամ՝ կազմելով եռամսյակային ծրագրի 83%-ը: Շեղումը հիմնականում արձանագրվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգի վերականգման, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող գյուղական կարողությունների ստեղծման, ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրման և գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ծրագրերում: Մինչույն ժամանակ, հարկ է նշել, որ տվյալ խմբում բարձր կատարողական է ապահովվել ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի ծախսերում: Վերջինիս շրջանակներում իրականացվել են 5 մլրդ դրամի ծախսեր՝ 23.4%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը: Խմբի ծախսերի 15%-ը կամ շուրջ 1.3 մլրդ դրամը կազմել են գյուղատնտեսության, 1.4%-ը կամ 118.4 մլն դրամը՝ անտառային տնտեսության և 83.6%-ը կամ 7.1 մլրդ դրամը՝ ոռոգման ծախսերը, որոնք համապատասխանաբար 53.3, 95.5 և 92 տոկոսով ապահովվել են եռամսյակային ծրագրի կատարումը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված խմբի ծախսերը

նվազել են 11.2%-ով կամ 1.1 մլրդ դրամով: Ծախսերի անկումը մեծ մասամբ պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգի վերականգման հրատապ վարկային ծրագրի և ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրման ծախսերի համապատասխանաբար 65.9%-ով և 15.7%-ով նվազմամբ: Բացի այդ, 2010 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվել է Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության աջակցությամբ իրականացվող «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» վարկային ծրագիրը, որը հաշվետու եռամսյակում չի նախատեսվել: Միևնույն ժամանակ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերն աճել են 41.2%-ով կամ 1.5 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 1.3 մլրդ դրամ են կազմել գյուղատնտեսության ոլորտի ծախսերը՝ կազմելով ծրագրվածի 53.3%-ը: Շեղումը մեծ մասամբ պայմանավորված է Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Գյուղական կարողությունների ստեղծում» վարկային ծրագրի (551.9 մլն դրամ) և գյուղատնտեսական կենդանիների պատվաստման (323.9 մլն դրամ) համար նախատեսված միջոցները չօգտագործելու հանգամանքով: Նշենք, որ խմբում ընդգրկված ևս չորս ծրագրերի գծով նախատեսված 7.8 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել: Գյուղատնտեսության դասի ցածր կատարողականը մասամբ էլ պայմանավորված է գյուղատնտեսական հողօգտագործողներին պետական աջակցության և Դանիական թագավորության աջակցությամբ իրականացվող «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականով, որոնց շրջանակներում կատարվել են համապատասխանաբար 773.3 և 3.9 մլն դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսվածի 87.5%-ը և 4.1%-ը:

Կատարված հատկացումների հաշվին գյուղատնտեսության ոլորտում իրականացվել են 14 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել են վեց վարկային և դրամաշնորհային ծրագրեր: Հարկ է նշել, որ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման» ճապոնական դրամաշնորհային ծրագրի, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման» և նույն ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման վարկային ծրագրերի շրջանակներում կատարվել են շուրջ 13.6 մլն դրամի ծախսեր, որոնք 2011 թվականի պետական բյուջեի առաջին եռամսյակի ծրագրով նախատեսված չեն եղել և կատարվել են նախորդ տարի ստացված միջոցների հաշվին: Գյուղատնտեսության ոլորտի հետևյալ հինգ ծրագրերի գծով արձանագրվել է 100%

կատարողական՝ «Սերմերի որակի ստուգման ու պետական սորտափորձարկման միջոցառումներ» (8.5 մլն դրամ), «Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումներ» (8 մլն դրամ), «Գյուղատնտեսական խորհրդատվական ծառայություններ» (շուրջ 43.6 մլն դրամ), «Բույսերի կարանտինի և գյուղամշակաբույսերի բուսասանիտարական վիճակի մոնիթորինգի, լաբորատոր փորձաքննությունների հիման վրա կանխարգելիչ և ախտորոշիչ ծառայությունների իրականացում» (12 մլն դրամ) և «Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի փորձաքննության միջոցառումների իրականացում» (28.6 մլն դրամ): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գյուղատնտեսության դասի ծախսերը նվազել են 8.4%-ով կամ 117.5 մլն դրամով: Նվազումը հիմնականում պայմանավորված է նավթ արդյունահանող երկրների կազմակերպության աջակցությամբ իրականացվող «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող թռչնագրիպին հակազդելու վարկային ծրագրերի շրջանակներում 2010 թվականի առաջին եռամսյակում կատարված ծախսերով, որոնք 2011 թվականի առաջին եռամսյակում նախատեսված չեն եղել: Գյուղատնտեսության ոլորտի ծախսերի անկումը մասամբ էլ պայմանավորված է գյուղատնտեսական կենդանիների պատվաստման համար նախատեսված միջոցները չօգտագործելու հանգամանքով:

Հաշվետու ժամանակահատվածում *անտառային տնտեսության ծախսերը* կազմել են շուրջ 118.4 մլն դրամ և 95.5%-ով ապահովել ծրագրի կատարումը: Շեղումը պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող անտառների պետական մոնիթորինգի հզորացման դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականով, որը կազմել է 31.7%: Նշված ոլորտում իրականացվել են երեք ծրագրեր, որոնցից երկուսի գծով արձանագրվել է 100% կատարողական. դրանք են՝ անտառպահպանական ծառայությունների և անտառային պետական մոնիթորինգի իրականացման ծախսերը, որոնք կազմել են համապատասխանաբար 107.7 մլն դրամ և 8.1 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ անտառային տնտեսության ծախսերը նվազել են 31.7%-ով կամ 54.9 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է նախորդ տարվա առաջին եռամսյակում կատարված անտառավերականգման և անտառշինական աշխատանքների ֆինանսավորմամբ, որոնք հաշվետու եռամսյակում չեն նախատեսվել: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ անտառային տնտեսության ծախսերի նվազումը նաև պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող անտառների պետական մոնիթորինգի հզորացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի 75.8%-ով կամ 8.1 մլն դրամով նվազմամբ:

2011 թվականի առաջին եռամսյակում *ռոռզման* դասի ծախսերը կազմել են ավելի քան 7.1 մլրդ դրամ և ապահովել եռամսյակային ծրագրի 92% կատարողական: Շեղումը հիմնականում

պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգի վերականգման հրատապ վարկային ծրագրի և ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության ծախսերի ցածր կատարողականով, որոնք կատարվել են համապատասխանաբար 53%-ով և 63.2%-ով՝ կազմելով 1.1 մլրդ դրամ և 792.6 մլն դրամ: Ոռոգման ոլորտում ընգրկված երկու ծրագրերի՝ կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման և ընթացիկ նորոգման ու ոռոգման համակարգերի հիմնանորոգման ծախսերի գծով նախատեսված 115.2 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել: Միևնույն ժամանակ, բարձր կատարողական է ապահովվել ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի գծով: Վերջինիս շրջանակներում իրականացվել են 5 մլրդ դրամի ծախսեր՝ 23.4%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը: Ոռոգման ոլորտին կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 6 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել են երկու վարկային և դրամաշնորհային ծրագրեր: Ոռոգում ջրառ իրականացնող կազմակերպությունների համար 2011 թվականի առաջին եռամսյակում նախատեսված 175.1 մլն դրամ ֆինանսական աջակցությունն ամբողջությամբ տրամադրվել է: Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության նպատակով հաշվետու ժամանակահատվածում նախատեսված 1.3 մլրդ դրամի դիմաց օգտագործվել է 792.6 մլն դրամ՝ 63.2%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Իսկ կոլեկտորադրենաժային ցանցի պահպանման և շահագործման, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքների ծախսերը կատարվել են 89.6%-ով՝ կազմելով շուրջ 13.2 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ոռոգման բնագավառի ծախսերը նվազել են 11.2%-ով կամ 898.5 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգի վերականգման հրատապ վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի և ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրման ծախսերի համապատասխանաբար 65.9%-ով և 15.7%-ով նվազմամբ: Միևնույն ժամանակ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերն աճել են 41.2%-ով:

Վառելիքի և էներգետիկայի բնագավառում 2011 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 2.9 մլրդ դրամ՝ 3.2 անգամ գերազանցելով ծրագիրը: Վերջինս հիմնականում պայմանավորված է Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման վարկային ծրագրի բարձր կատարողականով, որի շրջանակներում նախատեսված 123 մլն դրամի փոխարեն օգտագործվել է 2.5 մլրդ դրամ: 2010 թվականի առաջին եռամսյակի համեմատ վառելիքի և

Էներգետիկայի բնագավառի ծախսերը նվազել են 75.2%-ով կամ շուրջ 8.8 մլրդ դրամով: Վերջինս մասամբ պայմանավորված է Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի 65.5%-ով կամ 4.8 մլրդ դրամով նվազմամբ: Բացի այդ, Նախորդ տարվա առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվել է Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգնման վարկային ծրագիրը, որը հաշվետու տարվա առաջին եռամսյակում նախատեսված չի եղել:

Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 28.4 մլն դրամ է տրամադրվել «Միջուկային վառելիք» դասին՝ կազմելով ծրագրի 69.5%-ը: Միջոցներն ուղղվել են ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի պահպանմանը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում նշված ծախսերն աճել են 17%-ով կամ 4.1 մլն դրամով:

2011 թվականի առաջին եռամսյակում շուրջ 2.7 մլրդ դրամ են կազմել «Վառելիքի այլ տեսակներ» դասի ծախսերը՝ 3.6 անգամ գերազանցելով նախատեսված ցուցանիշը: Մասնավորապես՝ Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման ծրագրի գծով օգտագործվել են նախատեսվածից շուրջ 2.4 մլրդ դրամ ավել միջոցներ և կազմել 2.5 մլրդ դրամ: «Վառելիքի այլ տեսակներ» դասում իրականացվել են 6 ծրագրեր, որոնք բոլորն էլ իրականացվել են արտաքին աջակցությամբ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տվյալ դասի ծախսերը նվազել են 63.7%-ով կամ 4.7 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի նվազմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում 180.3 մլն դրամ են կազմել էլեկտրաէներգիայի դասի ծախսերը՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 135.1% կատարողական: Ծրագրի գերազանցումը հիմնականում պայմանավորված է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող բարձր լարման տեղափոխման սեկտորի վերականգնման վարկային ծրագրի շրջանակներում կատարված շուրջ 86.5 մլն դրամի ծախսերով, որոնք 2011 թվականի առաջին եռամսյակի ծրագրով նախատեսված չեն եղել: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ էլեկտրաէներգիայի գծով ծախսերը նվազել են 95.7%-ով կամ 4 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված 2010 թվականի առաջին եռամսյակում Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգնման վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերով, որոնք 2011 թվականի առաջին եռամսյակի ծրագրով նախատեսված չեն եղել:

2011 թվականի առաջին եռամսյակում *լեռնաարդյունահանման, արդյունաբերության և շինարարության* բնագավառում ՀՀ պետական բյուջեից իրականացվել են 2.6 մլն դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրվածի 62.4%-ը: Հատկացված միջոցներից նախատեսված 1.2 մլն դրամն ամբողջությամբ ուղղվել է ընդերքի մասին տեղեկատվության տրամադրման ծառայության ծրագրի ծախսերին: Նախատեսված 2 մլն դրամի դիմաց 1.4 մլն դրամ է օգտագործվել շինարարության թույլտվության ծախսերին՝ կազմելով նախատեսվածի 71.1%-ը: Իսկ «Երկրաբանահետախուզական աշխատանքների աջակցման ծառայություններ» ծրագրի գծով նախատեսված 1 մլն դրամի ծախսերը հաշվետու ժամանակահատվածում չեն կատարվել: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված խմբի ծախսերն աճել են 74.8%-ով կամ 1.1 մլն դրամով՝ պայմանավորված շինարարության թույլտվության ծախսերով, որոնք 2010 թվականի առաջին եռամսյակի ծրագրով նախատեսված չեն եղել:

2011 թվականի առաջին եռամսյակում *տրանսպորտի* բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 2.6 մլրդ դրամ՝ 39.2%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Խմբի ծախսերի 44.9%-ը կամ շուրջ 1.2 մլրդ դրամը կազմել են ճանապարհային, 2.7%-ը կամ 71.1 մլն դրամը՝ օդային և 52.4%-ը կամ 1.4 մլրդ դրամը՝ խողովակաշարային և այլ տրանսպորտի ծախսերը, որոնց եռամսյակային ծրագիրը կատարվել է համապատասխանաբար 29.7%-ով, 42.4%-ով և 54%-ով: Շեղումը հիմնականում պայմանավորված է ավտոճանապարհների պահպանման և շահագործման ծրագրի 23.6% կատարողականով, որի գծով ծախսվել է 360 մլն դրամ, ինչպես նաև Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ և Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն) դրամաշնորհային և վարկային ծրագրերի ու համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրման ծրագրերի գծով նախատեսված շուրջ 2.3 մլրդ դրամի միջոցները չօգտագործելու հանգամանքով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տրանսպորտի խմբի ծախսերը նվազել են 8.6%-ով կամ 246.5 մլն դրամով: Նվազումը հիմնականում պայմանավորված է ճանապարհային տրանսպորտի դասում ընդգրկված՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կենսական նշանակության ավտոճանապարհների բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման վարկային ծրագրի, ավտոճանապարհների պահպանման և շահագործման, ինչպես նաև Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող գյուղական ճանապարհների վերականգնման վարկային ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի համապատասխանաբար 73, 54.7 և 83.6 տոկոսով նվազմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում *ճանապարհային տրանսպորտի* բնագավառում պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 1.2 մլրդ դրամ և ապահովել եռամսյակային ծրագրի 29.7%

կատարողական: Շեղումը մեծ մասամբ պայմանավորված է ավտոճանապարհների պահպանման և շահագործման ծրագրի ցածր՝ 23.6% կատարողականով, որի գծով ծախսվել է 360 մլն դրամ, ինչպես նաև համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրման և պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման ծրագրերի գծով նախատեսված համապատասխանաբար 656 և 339.4 մլն դրամի միջոցները չօգտագործելու հանգամանքով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված խմբի ծախսերը նվազել են 46.5%-ով կամ 1 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կենսական նշանակության ավտոճանապարհների բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման, ավտոճանապարհների պահպանման ու շահագործման և Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի նվազմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում 14.3 մլն դրամ է նախատեսվել տրամադրել *Երկաթուղային տրանսպորտի* դասին՝ ՀՀ տարածքում ՌԴ զորամիավորումների հասցեով երկաթուղային փոխադրումների սպասարկման և մատուցվող ծառայությունների ծախսերի փոխհատուցման և «Երկաթուղու շինարարություն» ՓԲԸ-ին սուբսիդիայի տրամադրման նպատակով, որը սակայն, չի օգտագործվել:

Օդային տրանսպորտի գծով պետական բյուջեի ծախսերում նույնպես արձանագրվել է ցածր կատարողական՝ 42.4% կամ 71.1 մլն դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության արտաբյուջետային միջոցների հաշվին նախատեսված ծախսերի ցածր կատարողականով, որոնք 101.4 մլն դրամի փոխարեն կազմել են 15.1 մլն դրամ: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ օդային տրանսպորտի ծախսերն աճել են 2.6 անգամ՝ պայմանավորված ՀՀ օդանավակայաններում ՌԴ զորամիավորումների օդանավերի սպասարկման և մատուցվող ծառայությունների ծախսերի փոխհատուցման և ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության արտաբյուջետային միջոցների հաշվին ծախսերի իրականացմամբ, որոնց գծով նախորդ տարվա առաջին եռամսյակում միջոցներ չեն ծախսվել:

Խողովակաշարային և այլ տրանսպորտի գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 1.4 մլրդ դրամ՝ 54%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Շեղումը պայմանավորված է Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման դրամաշնորհային ծրագրի և Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցները (1.6 մլրդ դրամ) չօգտագործելու հանգամանքով: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ նշված ծախսերն աճել են 2.1 անգամ կամ շուրջ

733 մլն դրամով՝ պայմանավորված Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման ծրագրի շրջանակներում կատարված ծախսերով:

2011 թվականի առաջին եռամսյակում *կապի* ոլորտում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 100.2 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրի կատարումը: Կատարված հատկացումներն ուղղվել են Հեռահաղորդակցության և կապի կանոնակարգման ծառայությունների ֆինանսավորմանը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կապի ոլորտի ծախսերն աճել են 25.3%-ով կամ 20.2 մլն դրամով:

Այլ բնագավառների (զբոսաշրջություն և զարգացման բազմանպատակ ծրագրեր) ծախսերը կազմել են շուրջ 231.1 մլն դրամ կամ նախատեսվածի 92.7%-ը: Նշված գումարն ուղղվել է զարգացման բազմանպատակ ծրագրերի դասում ընդգրկված՝ ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի ֆինանսավորմանը: Տվյալ խմբում ընդգրկված զբոսաշրջության ոլորտին պետական աջակցության նպատակով ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից նախատեսված 12.5 մլն դրամը չի օգտագործվել: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված խմբի ծախսերը նվազել են 32.8%-ով կամ 113 մլն դրամով՝ պայմանավորված «Հազարամյակի մարտահրավեր» ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի նվազմամբ:

2011 թվականի առաջին եռամսյակում *տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների* շրջանակներում ՀՀ պետական բյուջեի ծախսերն ապահովվել են ծրագրի 100%-ով կատարում՝ կազմելով շուրջ 22.6 մլն դրամ: Նշված գումարից 10.1 մլն դրամը հատկացվել է ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի հարցերի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներին, 12.5 մլն դրամը՝ լեռնաարդյունահանման, արդյունաբերության և շինարարության դասում ընդգրկված պետական կարիքների համար ապրանքների, աշխատանքների (ծառայությունների) կողմնորոշիչ գների մեթոդաբանական, վերլուծական և տեղեկատվական ծառայություններին: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների ծախսերն աճել 43.2%-ով կամ 6.8 մլն դրամով:

2011 թվականի առաջին եռամսյակում *այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերությունների* խմբի փաստացի ցուցանիշը կազմել է շուրջ 617.6 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 74.2%-ով: Ընդ որում, խմբի ծախսերը կազմել են 696.1 մլն դրամ կամ ծրագրի 83%-ը, իսկ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքագրվել է 78.6 մլն դրամ: Մասնավորապես՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի և վերջինիս լրացուցիչ ֆինանսավորման

ծրագրի շրջանակներում ծախսվել է համապատասխանաբար 140.2 մլն դրամ և 44.6 մլն դրամ կազմելով նախատեսվածի 71.5%-ը և 157.9%-ը: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 190.8 մլն դրամ՝ ապահովելով նախատեսվածի 70.9%-ը: «ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված մուտքերի հաշվին առանց սահմանափակման իրականացվող ծախսերը կազմել են շուրջ 173.9 մլն դրամ:

2011 թվականի առաջին եռամսյակում *շրջակա միջավայրի պաշտպանության* բնագավառում պետական բյուջեի ծախսերը կազմել են 1.4 մլրդ դրամ կամ ծրագրով նախատեսվածի 69.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի ցածր կատարողականով: Նախորդ տարվա համեմատ շրջակա միջավայրի պաշտպանության ծախսերն աճել են 63.4%-ով, որը հիմնականում պայմանավորված է Աբու-Դաբիի Զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման ծախսերով, որի շրջանակներում 2010 թվականի նույն ժամանակահատվածում ծախսեր չեն կատարվել:

Հաշվետու ժամանակահատվածում *աղբահանման* խմբում նախատեսված 5.8 մլն դրամն ամբողջությամբ տրամադրվել է ուղիակտիվ թափոնների վնասագերծման ծառայություններին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը մնացել են գրեթե անփոփոխ:

2011 թվականի առաջին եռամսյակում *օդի աղտոտման դեմ պայքարի* ուղղությամբ կատարված ծախսերը կազմել են 24.5 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով եռամսյակային ծրագրի կատարումը: Մասնավորապես՝ շուրջ 22.5 մլն դրամ են կազմել ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիթորինգի ծառայությունների ձեռք բերման և 2 մլն դրամ՝ թափոնների ուսումնասիրության ծառայությունների ծախսերը: Նախորդ տարվա համեմատ օդի աղտոտման դեմ պայքարի ծախսերն աճել են 3%-ով՝ հիմնականում պայմանավորված թափոնների ուսումնասիրության ծառայությունների ծախսերի 46.2% աճով:

Կենսաբազմազանության և բնության պաշտպանության ծրագրերին ուղղվել է ավելի քան 1.2 մլրդ դրամ՝ 71%-ով կատարելով եռամսյակային ծրագիրը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՎՋԵԲ աջակցությամբ իրականացվող Սևանա լճի բնապահպանական դրամաշնորհային և վարկային ծրագրերի ցածր կատարողականով, որոնք կազմել են համապատասխանաբար 16.6% (75.5 մլն դրամ) և 46% (184.4 մլն դրամ): ՎՋԵԲ աջակցությամբ իրականացվող «Հանրային մասնավոր համագործակցություն» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 9.4 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել: Չեն կատարվել նաև Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման ծառայությունների գծով նախատեսված 31.4 մլն դրամի ծախսերը: Փոխարենը ՎՋԵԲ-ի աջակցությամբ իրականացվող «Ինժեներիա, նախագծում և պայմանագրերի

վերահսկողություն» դրամաշնորհային ծրագրի ծախսերը կատարվել են 120%-ով և կազմել 25.8 մլն դրամ: Ծրագրի 19.1%-ով գերազանցում է արձանագրվել նաև Աբու-Դաբիի Զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման ծրագրում, որի շրջանակներում հաշվետու եռամսյակում օգտագործվել է 833.4 մլն դրամ: Նշենք, որ կենսաբազմազանության և բնության պաշտպանության խմբի մյուս 8 ծրագրերն իրականացվել են նախատեսված ծավալով: Նախորդ տարվա համեմատ կենսաբազմազանության և բնության պաշտպանության ծախսերն աճել են 90.9%-ով կամ շուրջ 582.5 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող դրամաշնորհային և վարկային ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերով:

Հաշվետու ժամանակահատվածում շրջակա միջավայրի պաշտպանության գծով հետազոտական և նախագծային աշխատանքների բնագավառում Սևանա լճի ջրահավաք ավազանում հանքավայրերի շահագործման արդյունքում կուտակված թափոնների գույքագրման ծառայությունների գծով նախատեսված 1 մլն դրամի աշխատանքները չեն կատարվել:

Շրջակա միջավայրի պաշտպանության (այլ դասերին չպատկանող) ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 174 մլն դրամ և ապահովել ծրագրի 58.4% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է Գերմանիայի զագացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Հարավային Կովկասի տարածաշրջանում բնապահպանական դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականով՝ նախատեսված շուրջ 54.2 մլն դրամի փոխարեն կատարվել է 2.4 մլն դրամի ծախս: Բացի նշվածից, «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն բնապահպանական ծրագրերի իրականացման համար ՀՀ համայնքներին սուբվենցիաների տրամադրման համար նախատեսված 41.4 մլն դրամը չի օգտագործվել, իսկ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) նպատակով օգտագործվել է 164.6 մլն դրամ կամ ծրագրի 84.3%-ը: Տվյալ խմբում նախատեսված մյուս երկու ծրագրերը՝ Հայաստանի Հանրապետության տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիթորինգի և բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական ծառայությունների ձեռք բերումը, կատարվել են նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով համապատասխանաբար 3.6 մլն դրամ և 3.4 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ այլ դասերին չպատկանող շրջակա միջավայրի պաշտպանության ծախսերը նվազել են 14.5%-ով կամ 29.4 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է Գերմանիայի զագացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Հարավային Կովկասի տարածաշրջանում բնապահպանական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի նվազմամբ:

2011 թվականի առաջին եռամսյակում բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 12.4 մլրդ դրամ՝ կազմելով եռամսյակային ծրագրի 89.8%-ը: Ծրագրից շեղումը պայմանավորված է ջրամատակարարման բնագավառում արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի ցածր կատարողականով: Նախորդ տարվա համեմատ բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների ծախսերն ավելացել են 7.3%-ով կամ 839.4 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է բնակարանային շինարարության ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում տվյալ բաժնի ծախսերի 72.4%-ը կամ ավելի քան 8.9 մլրդ դրամ տրամադրվել է բնակարանային շինարարության ոլորտին՝ ամբողջությամբ կատարելով ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ բնակարանային շինարարության խմբի ծախսերն աճել են 12.7%-ով կամ ավելի քան 1 մլրդ դրամով: Նշենք, որ, ի տարբերություն նախորդ տարվա, 2011 թվականի պետական բյուջեով անավարտ շինարարության բնակշինարարական կոոպերատիվների փայտատերերի ներդրած միջոցների դիմաց պետական օգնության նպատակով գումարներ չեն նախատեսվել:

Բաժնի ծախսերի 24.1%-ն ուղղվել է ջրամատակարարման բնագավառի ծրագրերի ֆինանսավորմանը: Նշված ծախսերը կազմել են շուրջ 3 մլրդ դրամ կամ եռամսյակային ծրագրի 70.7%-ը, որը հիմնականում պայմանավորված է նրանով, որ արտաքին աջակցությամբ իրականացվող 3 ծրագրերի գծով արձանագրվել է ցածր կատարողական, իսկ ևս 2 ծրագիր չի կատարվել: Մասնավորապես՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 726.7 մլն դրամ կամ 41.8%-ը, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիրը կատարվել է 78%-ով և կազմել 214.3 մլն դրամ, Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի, ՀՀ Լոռու և ՀՀ Արմավիրի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի մասնավոր կառավարման հայեցակարգերի ներդրման դրամաշնորհային ծրագիրը՝ 59.5%-ով և կազմել շուրջ 115.1 մլն դրամ: Տվյալ դասում ընդգրկված և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության դրամաշնորհային և վարկային ծրագրերի գծով նախատեսված համապատասխանաբար 54.6 մլն և 541.8 մլն դրամի միջոցները հաշվետու եռամսյակում չեն օգտագործվել: Չի ծախսվել նաև ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնանորոգման ծրագրի շրջանակներում նախատեսված 43.5 մլն դրամը: Գերմանիայի զարգացման վարկային բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Լոռու մարզի

ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրի երկրորդ փուլի իրականացման համար առաջին եռամսյակում միջոցներ չեն նախատեսվել, սակայն փաստացի օգտագործվել է 362.1 մլն դրամ: Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիրը կատարվել է 116.9%-ով և կազմել ավելի քան 1.3 մլրդ դրամ, իսկ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագիրը՝ 159.1%-ով՝ կազմելով շուրջ 5.7 մլն դրամ: Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից ամբողջությամբ կատարվել է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սուբսիդավորումը՝ 202.9 մլն դրամի չափով: 2011 թվականի առաջին եռամսյակում ջրամատակարարման դասում ընդգրկված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են շուրջ 22.6 մլն դրամ կամ ծրագրի 77.4%-ը: Նախորդ տարվա համեմատ ջրամատակարարման բնագավառի ծախսերն ընդհանուր առմամբ նվազել են 2.8%-ով կամ 85.4 մլն դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի ծախսերի՝ *փողոցների լուսավորման* խմբում 340 մլն դրամ է օգտագործվել համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրման շրջանակներում՝ կազմելով նախատեսվածի 69.2%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ փողոցների լուսավորման ծախսերը նվազել են 19%-ով կամ 80 մլն դրամով:

Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների՝ այլ դասերին չպատկանող ծախսերը կազմել են ավելի քան 89 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 87.5%-ով: Նշված միջոցներն ուղղվել են ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ այս ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

2011 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի միջոցներով *առողջապահության* ոլորտում կատարվել են 10.7 մլրդ դրամի ծախսեր՝ ապահովելով նախատեսվածի 81.1%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ վարկային ծրագրի և ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց դեղորայքի տրամադրման ծախսերի ցածր կատարողականով, ինչպես նաև զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայությունների ծախսերը չկատարելու հանգամանքով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ առողջապահության ոլորտի ծախսերն աճել են 11.1%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է շտապ բժշկական օգնության, երեխաների բժշկական օգնության և մանկաբարձական բժշկական օգնության ծառայությունների ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում *դեղագործական ապրանքների* ձեռքբերման նպատակով պետական բյուջեից ծախսվել է շուրջ 219 մլն դրամ՝ կազմելով ծրագրվածի 25.2%-ը, որն ամբողջությամբ ուղղվել է ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց դեղորայքի տրամադրման նպատակով: Ցածր կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի ազգային ծրագրի ուժեղացման և պետական պահպանության ծառայությանը դեղորայքի տրամադրման ծրագրերի շրջանակներում նախատեսված 101.5 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերը նվազել են 46.7%-ով:

2011 թվականի առաջին եռամսյակում *արտահիվանդանոցային ծառայությունների* տրամադրվել է շուրջ 3.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 87.6% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայությունների ծրագիրը չկատարելու հանգամանքով: Արտահիվանդանոցային ծառայությունների խմբի ծախսերի 40.3%-ը կազմել են ընդհանուր բնույթի բժշկական ծառայությունների՝ բնակչության առողջության առաջնային պահպանման, 27.2%-ը՝ մասնագիտացված բժշկական ծառայությունների, 3.5%-ը՝ ստոմատոլոգիական ծառայությունների, 29%-ը՝ պարաբժշկական ծառայությունների ծախսերը: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 14.9%-ով կամ 465.8 մլն դրամով:

Բնակչության առողջության առաջնային պահպանման ծախսերը կատարվել են 98.3%-ով և 6.5%-ով գերազանցել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Մասնագիտացված բժշկական ծառայությունների ձեռքբերման համար օգտագործված միջոցների 47.4%-ը՝ 464.3 մլն դրամն ուղղվել է նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայությունների, 26.3%-ը՝ 257.4 մլն դրամ, հեմոդիալիզի անցկացման ծառայությունների, 21.5%-ը՝ 210.4 մլն դրամ՝ մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծախսերը: Մասնագիտացված բժշկական ծառայությունների ձեռքբերման ծախսերը կատարվել են 96.5%-ով և 4.7%-ով գերազանցել նախորդ տարվա առաջին եռամսյակի ցուցանիշը:

Հաշվետու ժամանակահատվածում 124.8 մլն դրամ է տրամադրվել ստոմատոլոգիական ծառայությունների ձեռքբերմանը՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 96.6%-ը և 1.4%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Պարաբժշկական ծառայությունների ձեռքբերման նպատակով տրամադրվել է ավելի քան 1 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 70.2%-ը և 46.8%-ով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Վերջինս հիմնականում պայմանավորված է շտապ բժշկական օգնության ծառայությունների ծախսերի 2.1 անգամ աճով:

2011 թվականի առաջին եռամսյակում *հիվանդանոցային ծառայությունների* շրջանակներում օգտագործվել է 5.4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 96%-ը: Խմբի ծախսերի 22.7%-ը կամ ավելի քան 1.2 մլրդ դրամը կազմել են ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայությունների, 28.6%-ը կամ 1.5 մլրդ դրամը՝ մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունների և 48.6%-ը կամ 2.6 մլրդ դրամը՝ բժշկական, մոր և մանկան կենտրոնների ծառայությունների ծախսերը, որոնք համապատասխանաբար 91.1, 99.6 և 96.3 տոկոսով ապահովել են եռամսյակային ծրագրի կատարումը:

Նշված խմբի ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեն մանկաբարձական բժշկական օգնության ծառայությունների ծախսերը (շուրջ 1.4 մլրդ դրամ, կատարողականը՝ 99.1%), ինչպես նաև երեխաների բժշկական օգնության ծախսերը (շուրջ 1.2 մլրդ դրամ, կատարողականը՝ 93.3%):

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հիվանդանոցային ծառայությունների ծախսերն ավելացել են 29.1%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է բժշկական, մոր և մանկան կենտրոնների ծառայությունների ձեռքբերման ծախսերի 44.5% աճով:

2011 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեից շուրջ 697.6 մլն դրամ տրամադրվել է *հանրային առողջապահական ծառայությունների* ֆինանսավորմանը՝ 99.3%-ով ապահովելով եռամսյակային ծրագրի կատարումը: Խմբում ընդգրկված են 8 ծրագրեր, որոնց գծով նախատեսված միջոցներն ամբողջությամբ ծախսվել են, բացառությամբ հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայությունների և արյան հավաքման ծառայությունների, որոնց կատարողականը կազմել է համապատասխանաբար 99.1% (305.8 մլն դրամ) և 94.7% (34.0 մլն դրամ): Նշված խմբում մեծ տեսակարար կշիռ ունեն հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայությունների և իմունականխարգելման ազգային ծրագրերը, որոնց շրջանակներում օգտագործվել է համապատասխանաբար 305.8 մլն դրամ և 230 մլն դրամ: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ հանրային առողջապահական ծառայությունների ծախսերն ավելացել են 13%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է իմունականխարգելման ազգային ծրագրի և ծխելու դեմ պայքարի և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Այլ դասերին չպատկանող առողջապահական ծախսերը կազմել են շուրջ 790.6 մլն դրամ կամ նախատեսվածի 41.5%-ը: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 14 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել են երկու վարկային ծրագրեր: Նշենք, որ խմբի ծախսերի ցածր կատարողականը մեծ մասամբ պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցների պակաս օգտագործման հանգամանքով, որոնք կազմել են 387.2 մլն դրամ կամ նախատեսվածի 35.4%-ը: Միևնույն

Ժամանակ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի շրջանակներում նախատեսված 17 մլն դրամի փոխարեն ծախսերը կազմել են 44 մլն դրամ:

Նշված խմբի ծախսերում, բացի արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերից, մեծ տեսակարար կշիռ ունեն նաև գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը (176.7 մլն դրամ, կատարողականը՝ 82.1%), դատաբժշկական և գենետիկ ծառայությունների ծախսերը (56.2 մլն դրամ, 100%) և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների ծախսերը (66.4 մլն դրամ, 98.7%):

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ դասերին չպատկանող առողջապահական ծախսերը նվազել են 39%-ով կամ 505.1 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ՀԲ աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի զգալի նվազմամբ և առաջին վարկային ծրագրի ավարտով:

Հանգստի, մշակույթի և կրոնի բնագավառներում 2011 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեից կատարվել են 3.3 մլրդ դրամի ծախսեր՝ ապահովելով ծրագրով նախատեսվածի 83.6%-ը: Ընդ որում ծախսերի գրեթե բոլոր դասերում արձանագրվել են ծրագրից շեղումներ: 2010 թվականի առաջին եռամսյակի համեմատ հանգստի, մշակույթի և կրոնի բնագավառի ծախսերն ավելացել են 4.9%-ով կամ 153.8 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է արվեստի բնագավառին տրամադրված միջոցների ավելացմամբ:

Հաշվետու եռամսյակում 288 մլն դրամ է տրամադրվել հանգստի և սպորտի ծառայությունների խմբի ծրագրերի ֆինանսավորմանը՝ կազմելով նախատեսվածի 79.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ սպորտային միջոցառումների կազմակերպման նպատակով առաջին եռամսյակում նախատեսված 41.9 մլն դրամի փոխարեն օգտագործվել է 3.9 մլն դրամ, ինչպես նաև նախատեսվածից 9.4%-ով պակաս են օգտագործվել ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման համար նախատեսված միջոցները: Այս ուղղությամբ կատարված ծախսերը կազմել են 221.3 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հանգստի և սպորտի ծառայությունների ծախսերը նվազել են 23%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է սպորտային միջոցառումների կազմակերպման ծախսերի պակաս օգտագործմամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ ՀՀ 2010 թվականի պետական բյուջեից ֆինանսավորվել էին ՀՀ տարածքում նետաձգության մեծահասակների

Եվրոպայի «Գրան պրի»-ի 2-րդ փուլի կազմակերպման ու անցկացման և 2010 թվականի Վանկուվերի ճմեռային օլիմպիական խաղերին մասնակցության ապահովման ծրագրերը:

2011 թվականի առաջին եռամսյակում *մշակութային ծառայություններին* հատկացվել է 1.7 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրով նախատեսվածի 83.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արվեստի, ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման ու հրատարակչական ծառայությունների ծախսերի ցածր կատարողականով:

Հաշվետու ժամանակահատվածում 218.3 մլն դրամ է տրամադրվել գրադարաններին՝ ապահովելով ծրագրի 94%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է տվյալ դասում ընդգրկված՝ գրադարանային ծառայությունների ծրագրում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրադարանների ծախսերն աճել են 4.9%-ով:

304.4 մլն դրամ է տրամադրվել թանգարաններին և ցուցասրահներին՝ կազմելով ծրագրով նախատեսվածի 92.5%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն աճել են 16.3%-ով:

Մշակույթի տների, ակումբների ու կենտրոնների ծախսերը կազմել են 11.8 մլն դրամ կամ ծրագրով նախատեսվածի 42.5%-ը, որը պայմանավորված է տվյալ դասում ընդգրկված՝ մշակութային օբյեկտների հիմնանորոգման ու շինարարության ծախսերի ցածր կատարողականով: Նշված ուղղություններով օգտագործվել է համապատասխանաբար 1.9 մլն դրամ և 2.9 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 13.1%-ը և 47.8%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ մշակույթի տների, ակումբների ու կենտրոնների ծախսերը նվազել են 27.5%-ով՝ պայմանավորված հիմնանորոգման ծախսերի նվազմամբ:

Այլ մշակութային կազմակերպությունների գծով օգտագործվել է 142.8 մլն դրամ կամ եռամսյակի համար նախատեսված հատկացումների 92.9%-ը: Միջոցների հիմնական մասը՝ համապատասխանաբար 76.2 մլն դրամ և 48.7 մլն դրամ, ուղղվել է արխիվային ծառայություններին և համայնքներին սուբվենցիաների տրամադրմանը: Շեղումը հիմնականում պայմանավորված է տվյալ դասում ընդգրկված՝ տեղեկատվական-վերլուծական ու հանրային իրազեկման ծառայությունների և ժողովրդական ստեղծագործության ավանդույթների և ժողարվեստի պահպանման ծրագրերի ցածր կատարողականով: Նշված ծրագրերի շրջանակներում օգտագործվել է համապատասխանաբար 1.8 մլն դրամ և 3.8 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 20.2 և 45.4 տոկոսը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ մշակութային կազմակերպությունների ծախսերն աճել են 8.1%-ով՝ հիմնականում պայմանավորված արխիվային ծառայությունների ծախսերի աճով:

2011 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեից 889.9 մլն դրամ տրամադրվել է արվեստի բնագավառի ֆինանսավորմանը՝ կազմելով նախատեսվածի 78.6%-ը: Շեղումը

հիմնականում պայմանավորված է հայկական տպագրության 500-ամյակին նվիրված միջոցառումների իրականացման համար նախատեսված միջոցները չօգտագործելու հանգամանքով և մշակութային միջոցառումների իրականացման ծրագրի ցածր կատարողականով, որը կազմել է 62.4% կամ 162.4 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արվեստի բնագավառի ծախսերն աճել են 18.6%-ով՝ հիմնականում պայմանավորված մշակութային միջոցառումների իրականացման ծրագրի, օպերային և բալետային արվեստի ներկայացումներ, թատերական ներկայացումների, ինչպես նաև երաժշտարվեստի և պարարվեստի համերգների ծախսերի աճով:

Անցած ժամանակահատվածում կինեմատոգրաֆիայի բնագավառի համար նախատեսված միջոցները օգտագործվել են 94.6%-ով, որոնք կազմել են 124.7 մլն դրամ և 1.7%-ով գերազանցել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ծախսերը: Տվյալ դասի բոլոր ծրագրերը, բացառությամբ «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ում ներդրումների, ամբողջությամբ կատարվել են:

2011 թվականի առաջին եռամսյակում հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման և պահպանման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 14.6 մլն դրամ կամ ծրագրի 51.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրմանը աջակցության նպատակով նախատեսված 12 մլն դրամը չօգտագործելու հանգամանքով: Արդյունքում հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման և պահպանման ծախսերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 41.9%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում *ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայությունների* գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 1.2 մլրդ դրամ՝ 89.1%-ով ապահովելով ծրագրային հատկացումները և 2.9%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Մասնավորապես՝ 991.6 մլն դրամ (94.9%) են կազմել հեռուստահաղորդումների, 149.4 մլն դրամ (62.3%)՝ հրատարակչությունների և խմբագրությունների, 29.9 մլն դրամ (100%)՝ տեղեկատվության ձեռք բերման ծախսերը: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ հեռուստահաղորդումների ծախսերը էական փոփոխություն չեն կրել, իսկ հրատարակչությունների ու խմբագրությունների և տեղեկատվության ձեռք բերման ծախսերն ավելացել են համապատասխանաբար 20.7 և 3.6 տոկոսով:

Կրոնական և հասարակական այլ ծառայություններին 2011 թվականի առաջին եռամսյակում պետական բյուջեից տրամադրվել է 56.2 մլն դրամ՝ կազմելով նախատեսված ծախսերի 39%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է երիտասարդական ծրագրերի, ինչպես նաև քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին

աջակցության ցածր կատարողականով: Նշված ծրագրերի ծախսերը կազմել են համապատասխանաբար 13 մլն դրամ և 43.1 մլն դրամ կամ նախատեսվածի 17.6%-ը և 61.8%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կրոնական և հասարակական այլ ծառայությունների ծախսերն աճել են 56.5%-ով հիմնականում պայմանավորված քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին աջակցության հատկացումների աճով:

2011 թվականի առաջին եռամսյակում *այլ դասերին չպատկանող հանգստի, մշակույթի և կրոնի* դասի շրջանակներում ՀՀ պետական բյուջեից օգտագործվել է 85.9 մլն դրամ՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 86%-ը և 4.1%-ով զիջելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Հատկացումներն ուղղվել են ՀՀ մշակույթի և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների աշխատակազմերի պահպանմանը՝ համապատասխանաբար 56.8 և 29.1 մլն դրամի չափով:

2011 թվականի առաջին եռամսյակում *կրթության* բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 17.9 մլրդ դրամ՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 94.1% կատարողական: Ծրագրից շեղումը հիմնականում առաջացել է կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների, միջնակարգ ընդհանուր կրթության և ըստ մակարդակների չդասակարգվող կրթության խմբերում: 2010 թվականի առաջին եռամսյակի համեմատ կրթության ծախսերն աճել են 1.1%-ով, որը հիմնականում պայմանավորված է տարրական ընդհանուր կրթության ծախսերի ավելացմամբ:

Անցած ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից շուրջ 5.0 մլրդ դրամ տրամադրվել է *նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթությանը*՝ ապահովելով ծրագրի 99.1% կատարողական: Հատկացումների զգալի մասն ուղղվել է հանրակրթական ուսուցման (3.7 մլրդ դրամ, կատարողականը՝ 99.2%) և հանրակրթական ուսուցման գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման (1.0 մլրդ դրամ, կատարողականը՝ 99.0%) ֆինանսավորմանը: Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթության խմբում համեմատաբար ցածր՝ 97.4% և 96.3% կատարողականներ են արձանագրվել նախադպրոցական կրթության և հատուկ կրթության գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորման ծախսերում, որոնք կազմել են համապատասխանաբար 10.3 մլն դրամ և 21.5 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված խմբի ծախսերն աճել են 20.4%-ով, որը հիմնականում պայմանավորված է հանրակրթական ուսուցման ծախսերի աճով:

2011 թվականի առաջին եռամսյակում կրթության ոլորտում կատարված ծախսերի հիմնական մասը՝ 50.5%-ն ուղղվել է *միջնակարգ ընդհանուր կրթությանը*: Այն կազմել է 9.0 մլրդ դրամ (որից 6.2

մլրդ դրամը՝ հիմնական և 2.8 մլրդ դրամը՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության ծախսերն են)՝ 98%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Միջնակարգ ընդհանուր կրթության խմբին հատկացված միջոցների հիմնական մասը՝ 7 մլրդ դրամ, կազմել են հանրակրթական ուսուցման ծախսերը, որոնք կատարվել են 98.5%-ով: Միջնակարգ ընդհանուր կրթության խմբում համեմատաբար ցածր՝ 84.5% կատարողական է արձանագրվել մասնագիտացված հանրակրթական ուսուցման ծախսերում, որոնք կազմել են 310.5 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրվել է միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերի 7.8% նվազում, որը հիմնականում պայմանավորված է հանրակրթական ուսուցման և վերջինիս գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորման ծախսերի նվազմամբ:

Անցած ժամանակահատվածում *նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության* ծախսերը կազմել են շուրջ 980.7 մլն դրամ կամ նախատեսված հատկացումների 99.3%-ը, որից ավելի քան 360.6 մլն դրամը՝ նախնական մասնագիտական (արհեստագործական), 620 մլն դրամը՝ միջին մասնագիտական կրթության ծախսերն են: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ծախսերը նվազել են 1.7%-ով: Միջին մասնագիտական կրթությանը տրամադրված միջոցներից 571.3 մլն դրամն ուղղվել է միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրմանը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության խմբի ծախսերն աճել են 3.8%-ով՝ հիմնականում պայմանավորված միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման ծախսերի ավելացմամբ:

2011 թվականի առաջին եռամսյակում *բարձրագույն կրթության* բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 1.5 մլրդ դրամ (որից 1.4 մլրդ դրամը բարձրագույն մասնագիտական կրթության և 109.0 մլն դրամը՝ հետբուհական մասնագիտական կրթության դասի ծախսերն են)՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 94.2%-ով կատարում: Ծրագրից շեղումը մեծ մասամբ պայմանավորված է բարձրագույն մասնագիտական կրթության ծրագրի համեմատաբար ցածր կատարողականով, որը կազմել է 73.4% կամ 222.6 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ բարձրագույն կրթության խմբի ծախսերն աճել են 6.5%-ով: Մասնավորապես՝ 7.8% աճ է գրանցվել բարձրագույն մասնագիտական կրթության ծախսերում, որը հիմնականում պայմանավորված է բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման ծախսերի ավելացմամբ: Հետբուհական մասնագիտական կրթության ծախսերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 7.8%-ով՝ հիմնականում պայմանավորված հետբուհական մասնագիտական կրթության գծով ուսանողական

նպաստների տրամադրման և հետքուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակների ծախսերի նվազմամբ:

Ըստ մակարդակների չդասակարգվող կրթության ծախսերը 2011 թվականի առաջին եռամսյակում կազմել են շուրջ 641 մլն դրամ (որից 451.1 մլն դրամը՝ արտադպրոցական դաստիարակության, 189.8 մլն դրամը՝ լրացուցիչ կրթության ծախսերն են)՝ ապահովելով ծրագրի 83.7%-ով կատարում: Շեղումը մեծ մասամբ պայմանավորված է մարզակառույցներին, մարզադպրոցներին և մարզական հասարակական կազմակերպություններին գույքով ապահովման նպատակով նախատեսված 50 մլն դրամի միջոցները չօգտագործելու հանգամանքով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված խմբի ծախսերն աճել են 17%-ով, ընդ որում, աճ է արձանագրվել ինչպես արտադպրոցական, այնպես էլ լրացուցիչ կրթության ծախսերում՝ համապատասխանաբար 10.7 և 35 տոկոսով:

2011 թվականի առաջին եռամսյակում *կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների* ծախսերը կազմել են ավելի քան 694.9 մլն դրամ կամ եռամսյակային ծրագրի 51.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կրթության որակի և համապատասխանության երկրորդ ծրագրի (118 մլն դրամ, կատարողականը՝ 19.4%) և կրթական օբյեկտների հիմնանորոգման (31.8 մլն դրամ, կատարողականը՝ 24.2%) ծախսերի ցածր կատարողականով: Հաշվետու ժամանակահատվածում չեն կատարվել «Նախագծային աշխատանքներ», «Ավագ դպրոցների շենքերի հիմնանորոգում» և «Աջակցություն արտասահմանում սովորող ուսանողներին» ծրագրերը: 2010 թվականի առաջին եռամսյակի համեմատ կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ծախսերը նվազել են 13%-ով կամ 103.7 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կրթության որակի և համապատասխանության երկրորդ ծրագրի և կրթական օբյեկտների հիմնանորոգման ծախսերի նվազմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից շուրջ 106.1 մլն դրամ տրամադրվել է *այլ դասերին չպատկանող կրթության* բնագավառում գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը՝ կազմելով եռամսյակային ծրագրի 85.6%-ը: Հատկացված միջոցներն ուղղվել են ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի և ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի պահպանմանը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված խմբի ծախսերը էական փոփոխություն չեն կրել:

2011 թվականի առաջին եռամսյակում *սոցիալական պաշտպանության* բնագավառի ծախսերը կազմել են 62.3 մլրդ դրամ՝ 90.2%-ով ապահովելով եռամսյակային ծրագրի կատարումը: Բաժին բոլոր խմբերում առկա են ծրագրից շեղումներ, սակայն առավելագույն գումարը բաժին է ընկել

ծերության, ընտանիքի անդամների և զավակների, ինչպես նաև այլ դասերին չպատկանող սոցիալական պաշտպանության ծրագրերին: 2010 թվականի առաջին եռամսյակի համեմատ սոցիալական պաշտպանության ծախսերն ավելացել են 6.9%-ով կամ 4 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է կենսաթոշակների, հոլիության ու ծննդաբերության նպաստի և ժամանակավոր անաշխատունակության դեպքում վճարվող նպաստի ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից 137.3 մլն դրամ է տրամադրվել *վատառողջության և անաշխատունակության* խմբի ծախսերին՝ կազմելով ծրագրի 50.5%-ը: Նշված հատկացումներից 20.1 մլն դրամ տրամադրվել է վատառողջությանը, 117.2 մլն դրամ՝ անաշխատունակությանը, որոնք կատարվել են համապատասխանաբար 49.1%-ով և 50.7%-ով: Վատառողջության դասի ցածր կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ բժշկա-սոցիալական վերականգնման ծառայությունների համար նախատեսված 18.4 մլն դրամը չի օգտագործվել: Ինչ վերաբերում է անաշխատունակության դասի կատարողականին, այն հիմնականում պայմանավորված է հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման ծրագրի ցածր կատարողականով, որը կազմել է 49.8% կամ 106.8 մլն դրամ: Սակայն նշված ծախսերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ունեցել են 54.1% աճ, ինչի արդյունքում վատառողջության և անաշխատունակության խմբի ծախսերն աճել են 25.3%-ով:

Ծերության բնագավառի ծրագրերին 2011 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 47 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 94.6%-ը: Նշված գումարից 39 մլրդ դրամն ուղղվել է ապահովագրական կենսաթոշակներին՝ կազմելով նախատեսվածի 95.2%-ը: Համապատասխանաբար 5 մլրդ և 454.2 մլն դրամ են կազմել սպայական անձնակազմի ու նրանց ընտանիքների անդամների և շարքային զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակների ծախսերը, որոնք կատարվել են համապատասխանաբար 97.3 և 58.4 տոկոսով: Շուրջ 2 մլրդ դրամ է տրամադրվել սոցիալական կենսաթոշակների վճարմանը, որը կատարվել է 91.7%-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ծերության բնագավառի ծախսերն աճել են 6.9%-ով՝ հիմնականում պայմանավորված ապահովագրական կենսաթոշակների ծախսերի աճով:

Հարազատի կորցրած անձանց խմբին հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է 36.3 մլն դրամ կամ նախատեսվածի 81%-ը: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն աճել են 3.5%-ով:

Ընտանիքի անդամների և զավակների խմբի գծով պետական բյուջեի ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 10.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 84.1%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության

ծախսերի պակաս կատարմամբ, որը կազմել է 7.3 մլրդ դրամ կամ 83.1%: Հղիության և ծննդաբերության նպաստի ծախսերը կազմել են 1.4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.5%-ը: Երեխայի ծննդյան միանվագ նպաստների վճարման համար առաջին եռամսյակում տրամադրվել է 912 մլն դրամ կամ նախատեսվածի 78.1%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ «Ընտանիքի անդամներ և զավակներ» խմբի ծախսերն աճել են 9.6%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է հղիության և ծննդաբերության նպաստի, ինչպես նաև ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության ծախսերի ավելացմամբ:

Սոցիալական ոլորտի ծախսերից 720.5 մլն դրամ տրամադրվել է *գործազրկության* խմբին, որը կազմել է եռամսյակային ծրագրի 51.9%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է գործազրկության նպաստի և վարձատրվող հասարակական աշխատանքների ծրագրերում: Գործազրկության նպաստի ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 694.5 մլն դրամ կամ նախատեսվածի 56.9%-ը, իսկ վարձատրվող հասարակական աշխատանքների համար նախատեսված 103.4 մլն դրամը չի օգտագործվել: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ գործազրկության խմբի ծախսերը նվազել են 22.6%-ով՝ պայմանավորված գործազրկության նպաստի ծախսերի կրճատմամբ:

Այլ դասերին չպատկանող սոցիալական հատուկ արտոնություններին առաջին եռամսյակում տրամադրվել է 1.2 մլրդ դրամ՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 79.2% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՄ պատերազմի վետերաններին, 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 13 հոդվածում նշված պատճառներով հաշմանդամ դարձած զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին դրամական օգնության տրամադրման (619.9 մլն դրամ կամ 69.5%), վետերանների պատվովճարների (178.6 մլն դրամ կամ 85%) և «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման (403 մլն դրամ կամ 96.8%) ծրագրերի ցածր կատարողականով: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ տվյալ խմբի ծախսերը նվազել են 4.5%-ով՝ հիմնականում պայմանավորված վետերանների պատվովճարների կրճատմամբ:

Այլ դասերին չպատկանող սոցիալական պաշտպանության խմբի ծրագրերին հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 2.3 մլրդ դրամ՝ կազմելով եռամսյակային ծրագրի 71.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման (10.9 մլն դրամ կամ 4%), կենսաթոշակային ապահովության ու ապահովագրության ծրագրերի վճարման հետ կապված ծառայությունների (310.3 մլն դրամ կամ

54.5%), ժամանակավոր անաշխատունակության դեպքում վճարվող նպաստի (1.2 մլրդ դրամ կամ 92.8%), սոցիալական ապահովության առանձին ծրագրերի վճարման հետ կապված ծառայությունների (72 մլն դրամ կամ 48.4%), գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (303.7 մլն դրամ կամ 83%) և նախարարությունների աշխատակազմերի պահպանման (302.7 մլն դրամ կամ 81.7%) ծախսերի ցածր կատարողականով: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ դասերին չպատկանող սոցիալական պաշտպանության խմբի ծախսերն աճել են 13.7%-ով՝ հիմնականում պայմանավորված ժամանակավոր անաշխատունակության դեպքում վճարվող նպաստի ծախսերի աճով:

2011 թվականի առաջին եռամսյակում ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցներից նախատեսված 5.5 մլրդ դրամից օգտագործվել է 703.6 մլն դրամ կամ 12.9%-ը: Նշենք, որ 2010 թվականի նույն ժամանակահատվածում ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից օգտագործվել էր 784.3 մլն դրամ:

«ՏՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ»

2011 թվականի առաջին եռամսյակում «Տ պետական բյուջեն կատարվել է շուրջ 9.4 մլրդ դրամ պակասուրդով՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 24.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ բյուջեի ազատ միջոցներից եռամսյակային ծրագրով նախատեսված 19.7 մլրդ դրամի օգտագործման փոխարեն նշված միջոցներն ավելացել են 9.9 մլն դրամով: Բացի այդ, արտաքին աղբյուրներից ստացվել է ծրագրված վարկային միջոցների 40.5%-ը: Անցած ժամանակահատվածում ներքին աղբյուրների գծով ֆինանսավորման ցուցանիշը կազմել է շուրջ 13.7 մլրդ դրամ, իսկ արտաքին ֆինանսավորման գծով՝ -4.3 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ բյուջեի պակասուրդը նվազել է 62.7%-ով կամ 15.7 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրները կազմել են շուրջ 13.7 մլրդ դրամ՝ նախատեսված 27.2 մլրդ դրամի դիմաց: Շեղումը, ինչպես նշվեց, առաջացել է բյուջեի ազատ միջոցների պակաս օգտագործման արդյունքում՝ հիմնականում պայմանավորված ծախսերի տնտեսումներով:

2011 թվականի առաջին եռամսյակում «Տ պետական բյուջեի պակասուրդը գանձապետական պարտատոմսերի հաշվին ֆինանսավորվել է 3.6 մլրդ դրամի չափով՝ նախատեսված -1.8 մլրդ դրամի դիմաց, ստացված 34.5 մլրդ դրամ հասույթի և 30.9 մլրդ դրամի մարման փաստացի ցուցանիշների պարագայում: Գանձապետական պարտատոմսերի հաշվին պակասուրդի ավել ֆինանսավորումը պայմանավորված է առաջին եռամսյակում հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կորդինացման շրջանակներում լրացուցիչ 6.5 մլրդ դրամ ծավալով կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխմամբ, որից 1 մլրդ դրամի պարտատոմսերը մարվել են մարտ ամսին:

2011 թվականի սկզբին «Տ ֆինանսների նախարարությունը հրապարակեց պետական պարտատոմսերի տեղաբաշխումների օրացույցը՝ պարտատոմսերի շուկայի մասնակիցների համար ամբողջ տարվա կտրվածքով հստակեցնելով պարտատոմսերի տեղաբաշխման օրերը՝ ըստ ժամկետայնության: Թեև այս պարագայում նվազում է թողարկողի ճկունությունը՝ պարտատոմսերի շուկայում նպաստավոր պայմանների ժամանակ լրացուցիչ տեղաբաշխումների իրականացման առումով, մյուս կողմից հրապարակային և թափանցիկ գործելակերպը նպաստում է պարտատոմսերի շուկա նոր ներդրողների ներգրավմանը:

Պետք է ընդգծել, որ գնաճի դեմ պայքարի շրջանակներում ֆինանսական շուկայում դիտարկվող տոկոսադրույքների ընդհանուր աճի միտումը գրեթե չի անդրադառնում պետական պարտատոմսերի եկամտաբերության վրա, քանի որ, դատելով 3-20 տարի մարման ժամկետ ունեցող պետական պարտատոմսերի նկատմամբ շուկայում ձևավորված շարունակական բարձր

պահանջարկից, միջին և երկարաժամկետ առումներով դրանք շուկայի մասնակիցների կողմից շարունակում են դիտարկվել որպես ներդրման ամենակայուն և հուսալի միջոց:

2011 թվականին շարունակվել են պետական խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկումները՝ ընդհանուր 350 մլն դրամ ծավալով: Այս պարտատոմսերից տեղաբաշխվել են 161,043.0 հազ. դրամի պարտատոմսեր, որից մուտքը կազմել է 161,513.6 հազ. դրամ:

Փաստորեն, 2011 թվականի առաջին եռամսյակում պետական պարտատոմսերի թողարկման ծրագրի իրագործման արդյունքում ներքին պետական պարտքը բնութագրող հիմնական ցուցանիշները հետևյալն են. շրջանառության մեջ եղած պետական պարտատոմսերի ծավալն անվանական արժեքով կազմել է 177,979,282.0 հազ. դրամ: Բոլոր պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 1596 օր (2010 թվականի առաջին եռամսյակում՝ 1403 օր), միջին կշռված եկամտաբերությունը՝ 12.06% (2010 թվականի առաջին եռամսյակում՝ 10.65%): Ներքին պետական պարտքը բաղկացած է 24.6% ՊԿՊ-ից, 49.1% ՄԺՊ-ից, 25.9% ԵՊ-ից և 0.4% ԽՊ-ից:

2011 թվականի առաջին եռամսյակում շարունակվել է ՀՀ ներքին շահող փոխառության պարտատոմսերի հետգնման գործընթացը. այդ նպատակով տրամադրվել է 222.6 հազար դրամ՝ նախատեսված 2 մլն դրամի դիմաց: Մուրհակների մարման նպատակով ծրագրով նախատեսված վճարումները կատարվել են 100%-ով: Այդ նպատակով պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 11.1 մլն դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ռեզիդենտներին պետական բյուջեից տրամադրվել են 2.15 մլրդ դրամի վարկեր (ծրագրվածի 88.1%-ը), որից 1 մլրդ դրամը՝ Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանը 2009 թվականին տրամադրված պետական վարկի միջոցներից տնտեսության կայունացման վարկավորման ծրագրի 1-ին բաղադրիչի ֆինանսավորման, 1 մլրդ դրամը՝ «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով մարդատար տրանսպորտային միջոցներ ներմուծող ֆիզիկական անձանց, 150 մլն դրամ՝ «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից հիմնադրված վարկային կազմակերպությանը բյուջետային վարկեր տրամադրելու նպատակով:

Շուրջ 1.2 մլրդ դրամ ստացվել է տրամադրված ներքին վարկերի վերադարձից՝ 88.6%-ով գերազանցելով ծրագրված ցուցանիշը: 2011 թվականի առաջին եռամսյակում կայունացման դեպոզիտային հաշվից օգտագործումը կատարվել է ծրագրված ծավալով և կազմել շուրջ 11.1 մլրդ դրամ:

2011 թվականի առաջին եռամսյակում պետական բյուջեի պակասուրդի արտաքին ֆինանսավորումը կազմել է -4.3 մլրդ դրամ՝ նախատեսված 10.9 մլրդ դրամի դիմաց:

Փոխառու միջոցներից ֆինանսավորումը կատարվել է 33.2%-ով՝ կազմելով 6.8 մլրդ դրամ: Հաշվետու ժամանակահատվածում միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից տրամադրվել են 9.6 մլրդ դրամի վարկային միջոցներ՝ կազմելով եռամսյակային ծրագրի 40.5%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է նրանով, որ Եվրամիության կողմից տրամադրվելիք մակրոֆինանսական աջակցության ծրագրի շրջանակներում նախատեսված 12.9 մլրդ դրամը չի ստացվել, քանի որ համաձայնագիրը ՀՀ ԱԺ կողմից վավերացվել է 2011 թվականի ապրիլ ամսին:

2011 թվականի առաջին եռամսյակում 2.8 մլրդ դրամ (նախատեսվածի 86.3%-ը) ուղղվել է արտաքին պարտավորությունների մարմանը, որից 1.8 մլրդ դրամը հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը, 572.2 մլն դրամ է տրամադրվել Էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման համակարգի ծրագրի գծով Ճապոնիայի նկատմամբ պարտքի մարմանը, 412 մլն դրամ՝ ԱՄՆ ապրանքային վարկերի մարմանը, 16.5 մլն դրամ՝ ԱԷԿ-ի վառելիքի չոր պահպանման համակարգի ծրագրի գծով Ֆրանսիայի նկատմամբ պարտքի մարմանը:

Ֆինանսական ակտիվների գծով պակասուրդի ֆինանսավորումը կատարվել է 116.2%-ով և կազմել -11.1 մլրդ դրամ: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ հաշվետու ժամանակահատվածում չեն օգտագործվել նախատեսված 373.6 մլն դրամի ժամանակավորապես ազատ միջոցները, փոխարենը դրանք ավելացել են 1.2 մլրդ դրամով: Հաշվետու ժամանակահատվածում ԼՂՀ-ին միջպետական վարկի գծով նախատեսված 9.6 մլրդ դրամն ամբողջությամբ տրամադրվել է: Վրաստանի կողմից Հայաստանի նկատմամբ ունեցած վարկային պարտավորությունների գծով կատարվել է 120.9 մլն դրամի վճարում՝ նախատեսված 71.9 մլն դրամի փոխարեն: Ստացված գումարից 49.1 մլն դրամը նախորդ տարվա պարտավորությունն է և Վրաստանի կողմից փոխանցվել է 2010 թվականի դեկտեմբերին, սակայն գանձապետական միասնական հաշվին մուտքագրվել է ընթացիկ տարվա հունվար ամսին: Բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերմանն ուղղվել է 434.1 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.8%ը: